

# ՆՈՐ ԶՈՒՂՍ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՊԱՎԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

ԺԲ ՏԱՐԻ, ԹԻԻ 100, ՅՈՒՆԵՍԿՈՒ-ՓԵՏՐՎԱՐ 2014

## 2014



## ՏԱՐԵՅՆԵՐԻ ՏԱՐԻ



# «ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՐԻ» 2014

ä²î ¶²Ø

Մ. Ե. Ա. Ի. Ի. ² ð² Ø² ² Î² Â à Ô Æ Î à ê Æ  
Ø ² Ì Æ Î² Û Û Î Æ È Æ Î Æ à Û

Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան  
Թեմակալ առաջնորդներին,  
հոգեւոր դասին,  
ազգային իշխանութեանց, եւ  
մեր ժողովրդի զաւակներին

Աստուծո՛ւ Որդո՛ւ մարդեղութեան եւ բացող Նոր տարւայ խորհրդով ու պատգամով օծուն այս օրերին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքից հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով ողջունում ենք ձեզ՝ մաղթելով երկնային բարիքներով լեցուն հարուստ ու երջանիկ օրեր:

Մեր նախաձեռնած աւանդութեան համաձայն, իրաքանչիւր տարին ձօնում ենք մեր ժողովրդի կեանքի հետ անմիջականօրէն աղերս ունեցող մի արժէքի, մի երեսօյթի, մտահոգութեան կամ մի նպատակի, հրաւիրելով մեր ժողովրդի զաւակներին ամբողջ տարւայ ընթացքում այդ մասին խորհրդածելու, անհատապէս թէ հաւաքաբար, ու մանաւանդ գործնական քայլերի դիմելու՝ ի խնդիր մեր ազգի առաւել ծաղկման, մեր եկեղեցու պայծառութեան ու մեր Հայրենիքի հզօրացման:

Այս ակնկալութեամբ, 2013 թականը հռչակել էինք Հայ մօր տարի: Մեր համայնքներում տեղի ունեցան բազմազան ձեռնարկներ ու վերաշեշտւեցին հայ մօր վիճակած եզակի դերը, յատկապէս՝ նոր մտահոգութիւններով, տագնապներով ու մարտահրաւերներով լեցուն ներկայ ժամանակներում: Նկատի ունենալով հայ ընտանիքում եւ ընդհանրապէս մեր հաւաքական կեանքում տարեց սերունդի կատարած յոյժ կարեւոր դերը ու նրա նկատմամբ մեր ունեցած խոր սէրն ու բարձր յարգանքը, 2014 տարին հռչակում ենք՝

## ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՐԻ

Արդարեւ, կար ժամանակ, երբ հասարակական կեանքի լուսանցքում ապրող մի դասակարգ էին դարձել տարեցները: Մի շարք հասարակութիւնների մօտ նրանք առօրեայ կեանքից ամբողջութեամբ հեռացած եւ ընդհանրապէս հանգստեան տներում ապրող «երէց քաղաքացիներ» էին համարում: Եւ այս մտայնութիւնից մեկնած, իւրայատուկ մօտեցումներ էին կազմաւորել ու վարելակերպեր ձեւաւորել տարեցների նկատմամբ: Այսօր, սակայն, փաստօրէն շրջել է հասարակութեան մօտեցումը տարեց սերունդի հանդէպ. հասարակական կեանքում տարեց սերունդի աշխույժ ներկայութիւնը ակնհայտ է: Պետութիւնները առաջացած տարիքում գտնուող անձանց նկատմամբ ճիգ չեն խնայում, որ նրանք լաւագոյն պայմաններում ապրեն իրենց երկրաւոր կեանքի վերջալոյսը: Յատկապէս արեւմտեան հասարակութիւնում մեծածախս ծրագրեր են մշակում տարեցների կենցաղային, բնակարանային, տնտեսական ու հասարակական կողմերին առնչող: Նաեւ մեր ժողովրդի վերաբերմունքը հին սերունդի նկատմամբ սկսել է փոխել վերջին տասնամեակներում: Սակայն սպասում ենք անելին:

Ա

## Տարեցները Աստուածաշնչում

Որպէս Քրիստոնէայ ժողովուրդ, մեր կեանքին առնչող որեւէ երեսօյթի գծով պէտք է նայենք Աստուածաշնչին, դրանից վերցնելու մեր ճիշտ մեկնակէտը եւ յստակ ուղղութիւնը:

Հին Կտակարանում «ծեր» եւ «երէց» բառերը գործածւում են ընդհանրապէս որպէս հոմանիշ եւ դրանք յիշած են բազմաթիւ առիթներով ու զանազան իմաստներով: Այսպէս, երէց կամ ծեր կոչւում են մի քաղաքի երեսելի-

ներն ու դատաւորները (Ա.Թգ 8.4), մի քաղաքի կամ մէկ տան ազնւականներն ու իշխանները (Ծն 50.7), ցեղերի ու գերդաստանների առաջնորդները (Թւ 11.16-17) եւ կամ մէկ ազգի գլխաւոր դէմքերն ու ղեկավարները (Ելք 3.16): Երէցների պաշտօնն էր, որպէս փորձառութիւն ու վաստակ ունեցող անձինք, ժողովրդի կեանքում առաջացած հարցերի լուծումներ առաջարկել, ժողովրդի դիմագրաւած մտահոգութիւնները քննել, նրանց կարիքներին ընդառաջել եւ առաջնորդի դեր կատարել:

Նոր Կտակարանում եւս երէցները համալուծ էին եկեղեցիների առաջնորդներն ու քահանայները (Ա.Պտ 5.1-2), քաղաքների ղեկավար դէմքերը (Ղկ 7.3), ինչպէս նաեւ նրանք, ովքեր նախանձախնդիր էին անցեալից ժառանգած ասանդութիւնների առողջ պահպանման (Մտ 15.1-2): Երէցների պարտականութիւնն էր մօտկից զբաղւել եկեղեցու կեանքում սետղծւած խնդիրներով (Գրծ 15.1-3), անհրաժեշտ թելադրութիւնները կատարել հաւատացեալների (Գրծ 16.4), ջանադիր լինել եկեղեցու կարգ ու կանոնի պահպանման, (Մտ 15.1-2), քաջալեր լինել Աստծու խօսքի տարածման (Ա.Պտ 5.1-2), ապահովել եկեղեցու տնտեսական եկամուտը (Գրծ 11.29-30) եւ անհրաժեշտութեան դէպքում ժողովներ գումարել եկեղեցում ծագած հարցերը քննելու (Ղկ 22.66):

Երէցների կամ ծերերի յաճախակի յիշատակումը Աստուածաշնչում յատկօրէն ցոյց է տալիս, որ նրանք հասարակական կեանքի մայր էջից դուրս մնացած մարդիկ չենք եղել, այլ նույնիսկ աստուածային յայտնութեան ծիրում նրանք կարելոր տեղ ու դեր են ունեցել: Տարեցները համարւել են հոմանիշ խոհեմութեան, իմաստութեան, փորձառութեան, արդարամտութեան եւ հետեւաբար՝ ստանձնել են ղեկավարի պատասխանատւութիւնը: Իր փրկագործական ծրագրի իրականացման մէջ, Աստուած յատուկ տեղ է տւել տարեցներին. յիշենք, օրինակի համար՝ Աբրահամն ու Սառան (Ծն 17.17), Զաքարիան ու Եղիաքէթը (Ղկ 1.7-36): Յիշենք նաեւ Աստծու օրհնութեան արժանացած երեք ծերունիներին.- Ենովք Ծերունուն, որ իր ողջ կեանքի ընթացքում «Աստծու հետ քայլեց», եւ դրա համար էլ Աստուած նրան իր մօտ հրաւիրեց՝ ինչպէս վկայում է Աստուածաշնչը (Ծն 5.24): Սիմոն Ծերունին, որ ինչպէս նկարագրում է Աւետարանը «արդար եւ աստուածավախ էր... Նրան յայտնւել էր Սուրբ Հոգուց թէ մահ չպէտք է տեսնի, մինչեւ Տիրոջը Օծեալը տեսնի» (Ղկ 2.25-26): Աննան, որ մի մարգարէուհի էր, եւ դարձեալ Աւետարանիչի բառերով՝ «տանարից չէր հեռանում, այլ ծոմով եւ աղօթքով Աստծուն ծառայութիւն էր անում գիշեր ու ցերեկ» (Ղկ 2.36- 37):

## Բ

### Տարեցները եկեղեցու կեանքում

Եկեղեցու հայրերը թէ՛ Աստուածաշնչի մեկնաբանութեամբ, եւ թէ՛ եկեղեցու պատմութեան յատկացած իրենց գրութիւններում կարելոր տեղ են տւել տարեցներին, միշտ մեկնելով աստուածաշնչական վկայութիւններից եւ դէպքերից: Նրանք ընդգծել են քրիստոնէական հաւատքի վկայութեան ու եկեղեցու կազմակերպչական աշխատանքներում՝ տարեցներին վերապահած իւրապատուկ դերը: Արդարեւ, եկեղեցու հայրերը այնքա՛ն ուսանելի թելադրութիւններ եւ վկայութիւններ ունեն տարեցների մասին. օրինակ՝ Յովհան Ոսկեբերան հայրապետը ծեր մարդուն նմանեցնում է հին գինուն, ասելով թէ՛ գինին որքան հինանայ, աւելի արժէք է ստանում, նույնպէս էլ Աստծու հոգով լեցուն մարդը, երբ հինանայ, այսինքն ծերանայ, աւելի արժէք է ստանում ու հասարակութեանը օգտաշատ է դառնում:

Բնականաբար, որպէս քրիստոնէալ ժողովուրդ, տարեցների նկատմամբ յատուկ յարգանք ու հոգածութիւն է ունեցել նաեւ մեր ժողովուրդը իր պատմութեան ընթացքում: Մեր եկեղեցու սրբազան հայրերը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչից ու Մեծն Ներսէսից սկսած մինչեւ Ս. Ներսէս Ընդհարալի, Խրիմեան Հայրիկից սկսած մինչեւ վերջին ժամանակների մեր հայրապետները, իրենց հովապետական ծառայութեան մէջ յատուկ կարելորութիւն են տւել տարեցներին, ո՛չ միայն շեշտելով մեր ազգի տարեցներին միշտ ուշադրութեան առարկայ դարձնելու հրամայականը, այլ նաեւ՝ նրանց համար ծերանոցներ ու հանգստեան տներ կառուցելու անհրաժեշտութիւնը: Այս գծով մեր եկեղեցին եւս գործնական քայլերի է դիմել հին ժամանակներից սկսած: Զմոռանանք, որ մեր կեանքի կրօնական, քաղաքական, մշակութային, կրթական ու այլ բնագաւառներում, շատերը եզակի դեր են կատարել ու կարելոր ներդրում են ունեցել՝ իրենց առաջացած տարիքում:

## Գ

### Յարգել եւ խնամել փարեցներին

Հասարակական կեանքում տարեցների ներկայութեան ու դերակատարութեան գծով ուրազձային կերպով ներկայացած պատկերը՝ թէ՛ Աստուածաշնչի, թէ՛ եկեղեցու հայրերի, եւ թէ՛ մեր ժողովրդի պատմութեան մէջ յատկօրէն ի յայտ է բերում տարեցների մօտ հետեւեալ նկատառելի յատկանիշերը.- խոհեմութիւն, հանդարտամտութիւն, արդարամտութիւն, ժուժկալութիւն ու փորձառութիւն: Մարդկային կենցաղակերպին, մտածելակերպին ու գործելակերպին կապւած այս հինգ յատկանիշերը, շատ թէ քիչ չափով, տեսնում ենք տարեցների մօտ

բոլոր ժամանակներում: Նրանք սովորական արժանիքներ չեն, այլ՝ մարդկային կեանքում խորք ու իմաստ, արժեք ու նպատակ տուող արժեքներ ու արժանիքներ, որոնց բացակայությունը մեր կեանքը մեծ չափով աղքատացնում է:

Տարեցները իրենք եւս պէտք է անդրադառնան, թէ իրենք յիշեալ եզակի արժանիքներով են օժտուած, եւ հետեւաբար կոչուած են տարիների ընթացքում իրենց վաստակած հոգեմտաւոր հարստութիւնն ու կեանքի փորձառութիւնը ի սպաս դնելու ընդհանրապէս մեր ժողովրդի ու յատկապէս մեր երիտասարդ սերունդի զարգացման ու առաջադիմութեան այնքան հրամայական գործին: Տիրոսի գրքում կարդում ենք, որ երեցները օրինակ պէտք է դառնան՝ հաւատքի, սիրոյ, համբերութեան, զգաստութեան եւ ժուժկալութեան (2.2):

Արդարեւ, տարեց սերունդը կազմում է հասարակութեան աւիշը, ընտանիքի հիմքը եւ զօրեղ կուսաններից մէկը՝ որեւէ կազմակերպութեան: Մեր ժողովուրդը բարձրագոյն աստիճանի հոգածութիւն, սէր, խնամք ու յարգանք պէտք է ցուցաբերի իր տարեց սերունդի նկատմամբ: Հետեւաբար՝

Առաջին, անհրաժեշտ է պաշտպանել տարեցներին: Բացարձակապէս ընդունելի չէ, որ տարեցները մեր կեանքից հեռու, մեր կեանքի լուսանցքի վրայ ապրող անզօր, անպաշտպան ու անտէր մարդիկ համարւեն: Երբեմն ականջալուր ենք լինում նման դատապարտելի մտայնութիւնների, մօտեցումների ու գործելակերպերի: Տարեցների գերագոյն պաշտպանը ա՛զգն է՝ իր բոլոր խաւերով ու պատասխանատուներով: Տարեցները մեր հայրենիքի, մեր եկեղեցու, մեր կառույցների, մեր ո՛ղջ ժողովրդի անբաժան ու անբաժանելի մասն են կազմում: Չմոռանանք սակայն, որ տկարութեան կամ դժարութեան մէջ գտնուող ծերունու տէրը առաջին հերթին իր ընտանիքն է, իր զաւակներն են: Պատասխանատուութեան այս ոգին պէտք է խորապէս արմատանայ մեր ազգի զաւակների գիտակցութեան մէջ:

Երկրորդ՝ անհրաժեշտ է յարգել տարեցներին: Աստուծային պատկիրան է տարեցներին յարգելը. այն նաեւ մարդկային կեանքի հիմնական օրէնքն է: Տարեցներին պէտք է յարգել, երկար տարիներ իրենց կատարած ծառայութեան, վաստակած փորձառութեան ու ձեռք բերած իմաստութեան համար: Տարեցներին պէտք է յարգել նրանց հետ մեր մշակած յարաբերութեան ճանապարհով ու երբ գտնուում ենք նրանց ներկայութեան մէջ: Տարեցներին հարկ է յարգել մեր առօրեայ կեանքի ընթացքում՝ սիրոյ ու գուրգուրանքի յատուկ վերաբերմունք ունենալով նրանց նկատմամբ: Երբեմն նոր սերունդի մօտ տեսնում ենք անտարբեր վերաբերմունք տարեցների հանդէպ: Այս վարքագիծը խոտոր է հանդիսանում մեր ժողովրդի քրիստոնէական թէ ազգային ըմբռումներին, եւ հետեւաբար՝ այն համարում ենք անընդունելի: Հին սերունդի եւ ընդհանրապէս երեցների նկատմամբ յարգանք ցուցաբերելը առանցքային տեղ պէտք է գրաւի նոր սերունդի դաստիարակութեան մէջ:

Երրորդ, անհրաժեշտ է լսել տարեցներին: Ընդհանրապէս մեր կեանքում հակամէտ ենք՝ խօսելու, թելադրելու, հրահանգելու: Լսելը ինքնավստահութիւն է ներշնչում եւ իմաստութեան է առաջնորդում մարդուն: Ժիշտ բաներ լսելու համար անհրաժեշտ է դառնալ տարիների ընթացքում փորձառութիւն ձեռք բերած տարեցների՝ նրանց կեանքից քաղած օրինակներին, դրական կամ բացասական, մեր կեանքի դիմաց ունենալու ու մեր կեանքի ուղեցոյց դարձնելու: Արդարեւ, նոր սերունդը շատ բան ունի սովորելու հին սերունդից: Որքան էլ ներկայ աշխարհը իր հսկայ զարգացումով օժտած լինի նոր սերունդին, տարեցների կեանքի փորձառութիւնը իր կարելու տեղն ունի մասնագիտութեան կողքին:

Չորրորդ, անհրաժեշտ է խնամել տարեցներին: Տարիքի բերումով տարեցները կարիք ունեն խնամքի, ամէն իմաստով: Ընտանիքի աւագ պարտաւորութիւնն է, իր տանը մաս կազմող տարեցին խնամք ու հոգածութիւն ցուցաբերի: Երբեմն իմանում ենք, որ զաւակները առաջացած տարիքում գտնուող իրենց ծնողների նկատմամբ անհոգ ու անպատասխանատու վերաբերմունք են ցոյց տալիս՝ նիւթական իրենց նազագոյն պարտականութիւնն իսկ զլանալով: Այս ցաւալի ու մեծապէս դատապարտելի երեսոյթը միանգամ ընդմիշտ պէտք է հեռանայ մեր կեանքից: Քրիստոնէական ու մարդկայն իմաստով մեղաւոր է այն անձը, ով իր պէհեր ծնողների նկատմամբ թերանում է որդիական պարտաւորութիւնը արժանավայել կերպով ու լիովին կատարել: Իսկ եթէ մի տարեց անտէր է, ընտանիք ու ազգական չունի, ինչպէս շեշտեցինք, նրա պաշտպանն ու խնամատարը պէտք է լինի ազգը, եւ փաստօրէն միշտ այդպէ՛ս է եղել:

Արդարեւ, ո՛չ միայն հեռաւոր ու մօտաւոր անցեալում, այլ այսօր եւս, պատի՛ւ մեր ժողովրդին. մեր տարեցների նկատմամբ մենք շարունակում ենք յատուկ հոգածութիւն ցուցաբերել: Լիբանանում, Սիրիայում, Յունաստանում, Միացեալ Նահանգներում, թերեւս նաեւ այլ տեղեր, ունենք լաւապէս կազմակերպւած ծերանոցներ ու հանգստեան տներ, երբեմն ուղղակի եկեղեցու հովանաւորութիւնը եւ երբեմն քաջալերանքը վայելող, որտեղ տարեց սերունդին պատկանող մեր ազգի զաւակները ապաստան են գտնում եւ ստանում նաեւ բժշկական խնամք: Տարբեր համայնքներում ունենք նաեւ հասարակական եւ բարեսիրական միութիւնների կողմից հաստատուած հասարակա-բժշկական կենտրոններ, ուր դիմում են առաջացած տարիքում գտնուող մեր հայրերն ու

մայրերը՝ օգտուելու նրանց բժշկական ու հասարակական ծառայություններից:

\* \* \*

Գ

Ներկայ տարին Տարեցների տարի հռչակելով՝ ցանկանում ենք հայրապետական Մեր բարձր գնահատանքը յայտնել տարեց սերունդին օգտակար հանդիսացող մեր բոլոր միություններին, բարերարներին, խնամակալություններին, բժիշկներին ու բուժքույրերին: Սիրելիներ, ինչ որ կատարում էք՝ ասուածահանոյ գործ է: Միշտ յիշէք Աւետարանի «Բարի Սամարացի» առակը (Ղկ 10.30-37) եւ շարունակէք ձեր նիրեալ ծառայութիւնը առաւել հաւատքով ու նիրումով:

Մեր խոր գնահատանքն ու ջերմ շնորհակալութիւնն ենք ցանկանում յայտնել նաեւ՝ Ծւէշցարիայի, Գերմանիայի, Միացեալ Նահանգների ու Դանիայի եկեղեցիներին ու բարեսիրական այն կազմակերպութիւններին, որոնք Ցեղասպանութիւնից յետոյ՝ ձերանոցներ հաստատեցին Լիբանանում, Սիրիայում եւ Յունաստանում եւ ապա դրանք փոխանցեցին մեր ժողովրդին՝ որոշ չափով նաեւ շարունակելով իրենց նիւթական նպաստը նրանց գործունէութեան:

Այս առիթով, մեր ջերմ թելադրանքն է.-

ա) Իւրաքանչիւր ընտանիքի առաջնահերթ ու նիրական պարտականութիւնը պէտք է լինի իր տարեց անդամների նկատմամբ անհրաժեշտ հոգածութիւն ցուցաբերել՝ բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութեամբ:

բ) Մեր ժողովրդի զաւակների, եւ յատկապէս, մեր նոր սերունդի մօտ տարեցների նկատմամբ մեր ունեցած յարգանքը, սէրն ու նախանձախնդրութիւնը անհրաժեշտ է անելի խորացնել: Այս ուղղութեամբ մեր ընտանիքները, դպրոցներն ու ակումբները վճռական դեր ունեն կատարելիք:

գ) Անհրաժեշտ է նիւթապէս սատարել գործող ձերանոցների եւ հասարակա-բժշկական կենտրոնների գործունէութեան, որպէսզի նրանք կարողանան առաւել եւս բարելաւել ու ծաւալել իրենց մարդասիրական ծառայութիւնը:

դ) Տարեցների գծով մեր հոգածութիւնը անելի կազմակերպ դարձնելու մտահոգութիւնից մղւած, անհրաժեշտ է նոր ծրագրեր մշակել՝ արդիական ու մասնագիտական մօտեցումներով: Մեր ունեւոր ազգայինները պէտք է լրջօրէն մտածեն յիշեալ կարիքների մասին:

Արդարեւ, Ցեղասպանութիւնից յետոյ՝ մենք տեսանք ջարդ ու արքայապարսպ մեր հայրերի ու մայրերի լուր տառապանքը: Նրանց յաջորդեց որբերի սերունդը, որ ինքը եւս ապրեց Ցեղասպանութեան անաւոր հետեւանքները: Մեր ներկայ տարեցների մէկ մասը որբերի սերունդին են պատկանում, իսկ միւս մասը՝ գաղթական դարձած ու հիւղաւանների կեանքը ապրած սերունդին: Այսօր ու միշտ մենք երբեք, երբեք չպէտք է մոռանանք մեր մեծ հայրերի ու մայրերի ապրած տառապալից կեանքը: Տարեց սերունդը իր խոր հաւատքով, ամուր կամքով, չարքաշ աշխատանքով ու վառ տեսիլքով կերտեց մեր ժողովրդի վերածնունդը: Այսօր ի՛նչ որ ենք, ի՛նչ որ ունենք, պարտական ենք հին սերունդին: Պատիւ ու յարգանք մեր հին սերունդին: Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախօրեակին, եկէք երախտագիտական խոր զգացումով ու հաւատարմութեան ոգով յիշենք մեր այն բոլոր տարեցներին, ովքեր զոհ դարձան Ցեղասպանութեան:

Եկէք յիշենք նաեւ այն որբերին, որոնք աւիշը դարձան մեր ժողովրդի յարութեան ու յուշարարը՝ պահանջատիրութեան:

Արդ, մեր թեմերի թեմակալ առաջնորդներին ու ազգ. իշխանութեանց ու մեր կեանքում գործող բոլոր կառույցներին կոչ ենք ուղղում՝ այս մտածումներով ու սպասումներով առաջնորդւած՝ 2014 թականի ընթացքում տարբեր ձեռնարկների ու գործնական քայլերի միջոցով առաւել խորացնել տարեց սերունդի նկատմամբ մեր հոգածութիւնը, սէրն ու յարգանքը:

Աղօթում ենք առ Բարձրեալ Աստուած, որ Իր երկնային խնամքի ու պաշտպանութեան ներքոյ միշտ պահի առաջացեալ տարիքում գտնող մեր հայրերին ու մայրերին, իրենց կեանքը լցնելով առողջութեան ու երջանկութեան առատագոյն բարիքներով:

Հայրական ջերմ սիրով ու օրհնութեամբ,

ՉԾՍՅՅՆՅՆՅՆ  
ՉԾՉԾ Չ Ի Չ ԱձՕՒՒՒ ձ  
ԾՕ՝Ի ՒՒ ՉՍՍ Ի ԱՒՒՒ ԱձՍ

1 յունարի, 2014  
Անթիլիաս, Լիբանան

(Արեւելահայերէնի վերածւած)

ԱՐԵՒԱԾԱԳ՝

ԲԵԹՂԵՏԷՍԵԱՆ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻ ՎՐԱՅ

«Քանզի Ասուած իր գթառատ ողորմութեամբ իբրեւ արեգակ՝ երկնքից պիտի ծագի մեզ վրայ եւ յայտնւի մեզ. մենք, որ մնում էինք խաւարում եւ մահաւան սուտերի տակ, որպէսզի մեր ոտքերն ուղղի դէպի ճանապարհը խաղաղութեան»:

(ՂԿ 1.78-79)



Դարձեալ մի Նոր տարի:

Մի նոր թական:

Մի նոր արշալոյս:

Մի նոր արեւածագ բեթղեհէմեան երկնակամարի վրայ:

Ինչպիսի՛ մեծ հրաշք, Ասուած բարձունքից այցելեց մեզ:

Նա իջաւ բարձունքից: Արեւածագ տեղի ունեցաւ: Արեւածագը այն պահն է, երբ արեւը յայտնուում է հորիզոնի վրայ: Գիշերը դրսում խաւար է ամէն կողմ, կարծէք առաւօտն երբէք չի բացուելու: Ժամերն անցնում են, տակաւին լոյս չկայ: Սակայն, երբ մի քիչ աւելի սպասենք կը տեսնենք, որ արեւը վերջապէս սկսում է իր արագ հայեացքով երեւալ երկրի ծայրում, եւ լոյսի իր շողերըը կամաց-կամաց թափանցում են մթնշաղից, հեռացնելով խաւարը:

«Իբրեւ Արեգակ՝ երկնքից պիտի ծագի մեզ վրայ եւ յայտնւի մեզ»:

Ծիշդ այսպէս տեղի ունեցաւ Քրիստոսի գալուստը այս աշխարհ: Խաւարի մէջ նստած ժողովուրդներ երկա՛ր-երկա՛ր սպասեցին արեւածագին. արեւածագ, որ լոյս սփռեց խաւարի մէջ ապրող մարդկանց վրայ: Մի խօսքով, Լոյսը, Ծագող Արեգակը երկնքից ցած իջաւ՝ լուսաւորելու համար խաւարի եւ մահաւան սուտերի տակ ապրողներին, նրանց ոտքերի առաջ լուսաւորելու կեանքի ճանապարհը, առաջնորդելու դէպի խաղաղութիւն, երանութիւն:

Ինչո՞ւ Ասուած փրկիչներ ուղարկեց եւ ժամանակի մէկ երանելի կէտին մի Փրկիչ ուղարկելու խոստումը սուեց:

Ինչո՞ւ Ասուածորդին աշխարհ եկաւ:

Ասուած ինչո՞ւ մարդեղացաւ:

Որովհետեւ մարդը մեղքի տիղմի մէջ էր ընկղմել:

Որովհետեւ մարդը խաւարի մէջ էր ապրում:

Որովհետեւ մարդն անօգնական էր, եւ պէտք ունէր փրկարար ձեռքի, պէտք ունէր օժանդակ ձեռքի, նրան ձերբազատելու այդ անկեալ վիճակից, խաւարից առաջնորդելու լոյսին, ազատագրելու մեղքի ճիրաններից եւ փրկութեան ճանապարհով հասցնելու Իրեն՝ Ամենակալին:

«Այն ժողովուրդը, որ խաւարի մէջ էր ապրում, տեսաւ մի մեծ լոյս, եւ լոյս ծագեց նրանց համար, որ ապրում էին մահաւան աշխարհի ու սուտերի մէջ» (Մտ 4.16):

Մի խօսքով մարդը պէտք ունէր ծագող արեգակի, առաւօտեան բացող արշալոյսին՝ այդ լոյսով լուսաւորելու իր խաւարացած սիրտն ու հոգին:

Երբ լոյսն է բացուում, ամէն ինչ տարբեր է երեւում, հարազատութեամբ ու ճշմարիտ:

Երբ լոյսն է բացուում, մեր խնդիրներն իրենց իսկութեամբ են երեւում:

Երբ լոյսն է բացուում, քաջութիւնն է լցնում մեր սրտերը՝ շարունակելու մեր օրը, աշխատանքը, նիւրումն ու ծառայութիւնը՝ աւելի նպատակադրած ու նպատակաուղղած, շարունակելու մեր կեանքը, յաղթական երթը դէպի ճանապարհը խաղաղութեան:

Քրիստոս է ճշմարիտ, յախտեճական եւ մշտնջենական լոյսը:

Նա, երբ Իր ասուածային բարձունքից խոնարհեց, եկաւ այս աշխարհ, իբրեւ լոյս, ամէն ինչ փոխեց. ոչինչ այլեւս չմնաց նոյնը:

Մեր կեանքում շատ մեծ մութ անկյուններ ունենք. «Մենք, որ մնում էինք խաւարում եւ մահւան սուերի տակ»: Չկայ անէլի մուսլ վայր, քան մեր մեղքերի անդունդը: Բոլորս էլ ծանրացել ենք մեղքերի բեռան տակ, սակայն շատ յաճախ չենք իմանում ի՞նչ անել: Երբ Քրիստոսն Իր լոյսը շողացնի մեզ վրայ, Նա չի դատապարտելու մեզ, այլ ասելու է. «Ինձ եկէ՛ք, հաւատացէ՛ք Ինձ, վստահէ՛ք Ինձ»: Եւ երբ մենք կատարենք Նրա ասածները, մեր մեղքերը վերջնականապէս կը ներւեն եւ մենք կը թեթեւանանք մեղքի ծանրութիւնից:

Քրիստոսն երբ եկաւ այս աշխարհ, մահւան սուերն ընդմիջտ հեռացաւ:

Երբ Նա եկաւ, մեր մեղքերն Իր վրայ վերցրեց եւ մեզ միանգամայն ազատեց:

Երբ Նա եկաւ, մեր ոտքերը գտան խաղաղութեան որոնւած ճանապարհը: Նա եկաւ «որպէսզի մեր ոտքերն ուղղի դէպի ճանապարհը խաղաղութեան»:

Նայենք Արեւին:

Այո՛, Քրիստոս է յաւիտենական լոյսը եւ ճշմարիտ ուղին բոլոր նրանց համար, ովքեր կորցրել են իրենց ճանապարհը: Նա մարդկանց դէպի խաղաղութեան ճանապարհն է առաջնորդում, Աստծուց հեռացած մարդուն Աստծուն վերադարձնում՝ Հօր Աստծու հետ հաշտեցնելու: Եւ «*Հիմա, որ հաւատով արդարացած ենք, այլեւս հաշտւած ենք Աստծու հետ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով*» (Հո 5.1):

Նայենք Արեւին:

Ս. Ծննդեան առաջին առաւօտեան Արեւն իմանալիորէն փայլեց Բեթղեհէմի երկնակամարի վրայ:

Այսօր, Բեթղեհէմի մսուրից շողարձակող լոյսը տարածում է ամբողջ աշխարհի վրայ, որպէսզի խաւարի մէջ ապրողները դուրս գան մեղքի տիղմից, որպէսզի յուսադրեն նրանք, ովքեր տակաւին իրենց կեանքի իսկական ուղին չեն գտել:

Ս. Ծննդեան առաջին առաւօտեան Արեւը գեղեցկորէն փայլեց Բեթղեհէմի երկնակամարին վրայ:

Նայենք Արեւին:

Նայենք Միածին Որդուն:

Եւ այսօր, այս մեծ խորհրդի տօնին, եկէ՛ք հարց տանք. երբեւիցէ Քրիստոսի լոյսը փայլե՞լ է մեր սրտերում, թէ տակաւին խաւարի մէջ ենք ապրում, ծանրաբեռնւած մեղքերով: Ի՞նչ է լինելու մեր պատասխա-

նը...: Մտածենք այս պատասխանի մասին:

Քրիստոսի ծնունդը մշտագոյ ճշմարտութիւն է, Աստծու յաւերժական ու մշտական այցն է Իր ժողովրդին: Աւետիս է բոլորիս:

Ձեզ եւ մեզ մեծ անտիս. երկնքից ծագող Արեգակը՝ Քրիստոսն այստեղ է, եկել է կրկին մեզ ացելելու: Կարո՞ղ ենք ամէն ինչ թողնել եւ ընդառաջ գնալ Նրան. թէ զբաղւած ենք մեր հոգսերով միայն, եւ խանգարում ենք երկնային այս այցով: Հրաւերն ուղղւած է իւրաքանչիւրիս, երբէք չպատճառաբանենք որ «նոր արտ ենք գնել», «նոր եզներ ենք գնել» եւ կամ «նոր ենք ամուսնացել» ժամանակ չունենք:

Ձեզ եւ մեզ մեծ անտիս. երկնքից լոյսը երկիր է իջել, կարո՞ղ ենք մեր աչքերը բանալ եւ տեսնել:

Ձեզ եւ մեզ մեծ անտիս. Բեթղեհէմի մսուրի մէջ ծնւած մանուկն է աշխարհի լոյսը, Արեգակը՝ աշխարհի ՓՐԿԻՉԸ:

\*\*\*

Ս. Ծննդեան նւիրական այս առաւօտեան, սիրոյ իմ սրտագին ողջոյնս եմ ուղղում ձեզ՝ բոլորիդ, Պատգամաւորական ժողովի անդամներին, Կրօնական եւ Թեմական խորհուրդներին, հոգեւորականաց դասին, ազգային-եկեղեցական մարմիններին, կրթական, բարեսիրական, կանանց, երիտասարդական, մարզական եւ մշակութային միութիւններին, կազմակերպութիւններին, ազգային վարժարանների եւ Կիրակնօրեայ դպրոցների ուսուցչական կազմերին եւ ուսանողութեան, Ծնողական խորհուրդներին, եկեղեցու սպասաւորներին, դպրաց դասերին, ազգային հաստատութիւններին եւ մեր ժողովրդի բոլոր զաւակներին անխտիր:

**Ձեզ եւ մեզ մեծ անտիս՝ Քրիստոս ծնեց եւ յայրնեց:**

**ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ՉԱՐԵԱՆ  
Առաջնորդ  
Սպասանի հայոց թեմի**

6 յունւար 2014  
Ս. Ամենափրկչեան վանք  
Նոր Զուղա

ՄՊԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԱՅՅԸ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Երկուշաբթի՝ յունարի 13-ի կէսօրից յետոյ ժամը 1-ին, Նոր տարւայ եւ ս. Ծննդեան տօների աթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով, ս. Ամենափրկչեան վանք այցելեցին Սպահանի նահանգապետ Ռասուլ Ջաոգաուփուռը, Մշակոյթի եւ իսլամական առաջնորդութեան հիմնարկութեան, Միասուածեան կրօնների երկխօսութեան գրասենեակի, նահանգապետարանի արարողակարգային բաժնի պետերը եւ նահանգապետարանի մի շարք բարձրաստիճան պաշտօնեաներ:



Նահանգապետին եւ նրան ընկերակցողներին առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ջերմ դիմաւորեցին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, Թեմի պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների, Հաշիքննիչ, Կալւածա-տնտեսական, Բարեգործական, Ն.Ձ. Հայոց գերեզմանատան բարեգործման մարմինների, Հայ կանանց գթութեան միութեան եւ Հայուհեաց բարեգործական ընկերութեան ատենապետերն ու ներկայացուցիչները:

Սկզբում, բարեմաղթանքների ջերմ խօսքերով արտայայտեց նահանգապետ պրն. Ջաոգաուփուռը, ով իբրեւ Սպահանի նահանգապետ նշանակելուց յետոյ առաջին անգամ էր ս. Ամենափրկչեան վանք այցելում: Նա շնորհաւորեց 2014 թուականը եւ ս. Ծննդեան տօնը, աշխարհի, Իրանի եւ յատկապէս Սպահանում ապրող հայ համայնքին ու հանդիպմանը ներկաներին: Յաջորդիւ անդրադառնալով հակառակ արածաշրջանի զանազան երկրներում տիրող ծանր-պատերազմական եւ խառնակ իրավիճակներին, Իրանում՝ երկրի առաջնորդի եւ ղեկավարութեան ցուցաբերած ճկուն քաղաքականութեան շնորհիւ առկայ կայունութեանը, յոյս յայտնեց, որ գալիք տարւան նոյնպէս տարածաշրջանում հաստատուի խաղաղութիւնն ու հանգստութիւնը: Նահանգապետը յատուկ շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ Սրբազան Հօրը եւ Ազգային իշխանութեանը՝ Ամանորի տօները իսլամական սգոյ օրերին զուգադիպելու պատճառով հրապարակած յայտարարութեան կապակցութեամբ, որով կոչ էր ուղղւել հայ համայնքին՝ հանդիսութիւններն աւելի զուսպ կազմակերպելու համար:

Թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը ողջունելով նահանգապետի եւ նրան ընկերակցողների ներկայութիւնը պատմական ս. Ամենափրկչեան վանքի յարկի տակ, պետական պատասխանատուների այցը ոգեւորիչ երեւոյթ համարեց եւ ուժ ու կորով մաղթեց հիւրերին իրենց ծառայութիւնների մէջ: Առաջնորդ Սրբազան Հայրն իր արտայայտութիւնների մէջ շեշտեց, թէ այսօր մարդիկ խիստ կարիքն ունեն Բրիստոսի ծնունդով ւաւետող սիրոյ եւ յարգանքի, որի համար Ամանորեայ արարողութիւնների ընթացքում հաւա-

տացեալներն աղօթք բարձրացրին առ Աստուած եւ հայցեցին աշխարհի ու յատկապէս Սիրիոյ ժողովրդի համար խաղաղութիւն եւ պատերազմների աւարտ:



Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը, ծանօթացման գծով, նահանգապետին ներկայացրեց ազգային իշխանութեան եւ միութիւնների ներկայացուցիչներին եւ հակիրճ բացատրական փոխանցեց նրանց գործունէութեան մասին:


Երկուստեք ցուցաբերած մտերիմ եւ բարեկամական կեցածքի հետեւանքով, պաշտօնական այս հանդիպումը վերածւեց ջերմ ու գեղեցիկ մթնոլորտի: Հանդպման աւարտին նահանգապետի կողմից յուշանւէր յանձնուեց գերշ. Սրբազան Հօրը, որից յետոյ Սպահանի հեռուստատեսութեան հետ ունեցած հարցազրոյցի ընթացքում գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը շեշտեց, որ մնան հանդիպումներ վստահութիւն են ներշնչում հայ համայնքի անդամներին եւ պատճառ դառնում, որ նրանք իբրեւ Իրանի լիիրաւ քաղաքացիներ առաւել հաւատարիմ մնան իրենց քաղաքացիական պարտականութիւններին ու կոչումին: Նոյն զրոյցի ընթացքում պրն. Ջաոգաուփուռն եւս շեշտեց, որ պետութեան մօտ երբեք խտրականութիւն չի դրում Իրանի քաղաքացիների միջեւ եւ բոլոր կրօնական փոքրամասնութիւնները համարում են Իրանի համահաւասար քաղաքացիներ:

Ս. Ամենափրկչեան վանքի «Խաչատուր Կեսարացի» անուան թանգարանի մուտքի մօտ լուսանկարելուց յետոյ, պետական պատկերակցութիւնը հրաժեշտ տւեց բոլորին:



### ՍՊԱՀԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՒ 5-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Ա.Ա. ՎԱՆՔ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻ

Կիրակի՝ 2014 թվականի յունարի 12-ի ժամը 13:00-ին, ս. Ամենափրկչեան վանք այցելեցին Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ պրն. Սաղայեան-Նեժդը, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ասառ-զադեգանը եւ քաղաքապետարանի մի քանի բարձրաստիճան պաշտօնեաներ: Պատկերակցութիւնը հիւրընկալեց ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում, որտեղ ներկայ էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամատրական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնք. Վարուժ Մինասեանը, Նոէլ Մինասեանը եւ Արշալոյս Խուդավերդեանը: Ներկայ էին նաեւ Կրօնական խորհրդի, Հաշիքնիչ, Կալաձա-տնտեսական, Ն.Ձ. Հայոց գերեզմանատան բարեգարդման մարմինների, Ն.Ձ. հայ կանանց գթութեան միութեան եւ Ն.Ձ. հայուհեաց բարեգործական ընկերութեան ներկայացուցիչները:



Գերշ. Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնեց քաղաքապետերի այցելութեան առթիւ եւ ուժ ու կորով մաղթեց նրանց՝ Սպահան քաղաքի բարգաւաճման եւ գեղեցկացման ուղղութեամբ նախատեսած ծրագրերի իրականացման համար: Թեմակալ առաջնորդն անդրադառնալով Նոր տարւան, շեշտեց, որ բնականոն ընթացքով փոխուում են տարիները, սակայն Էականը դա չէ, այլ այն ինչը, որը պէտք է փոխի եւ նորոգի՝ դա մարդ արարածն է՝ իր հոգով, մտածելակերպով եւ գործունէութեամբ, որպէսզի իւրաքանչիւր տարւայ աւարտին իր անձի հետ հաշիւետութիւն կատարելով՝ անդրադառնայ անցեալի գործած սխալներին եւ նոր տարւայ ընթացքում խուսափելով դրանցից՝ աստուածամերձ կեանքի ուղի որդեգրի իր համար:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն իր խօսքերի շարունակութեան մէջ յատկապէս անդրադառնալով տարածաշրջանի դէպքերի զարգացմանը եւ շեշտելով, որ 2013 թվականին ծանր օրեր ապրեցին աշխարհի որոշ ժողովուրդներ, յոյս յայտնեց, որ 2014 թվականին բարելաւելու է իրավիճակը եւ վերացելու են պատե-

րազմներն ու ընդհարումները: Առաջնորդ Սրբազան Հայրը յիշեցրեց, որ Ամանորեայ արարողութիւնների ընթացքում առ Աստուած բարձրացրած աղօթքների մէջ յիշել է անկեպաններին, հիւանդներին եւ բոլոր նրանց՝ ուլքեր կարիքի մէջ են, եւ խնդրել Աստծուց, որ փարատի նրանց ցաւերն ու դժարութիւնները: Նա նոյնպէս ասաց, որ Ամանորի առաջին օրերում Պատգամատրական ժողովի դիւանի եւ Թեմական խորհրդի ատենապետերի հետ այցելել են Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհուած հայ նահատակների ընտանիքներին եւ շնորհաւորել նրանց Նոր տարին եւ ս. Ծնունդը:

Սրբազան Հայրն աշխարհի համայն մարդկութեան եւ յատկապէս Իրանի բարձրաստիճան պատասխանատուների համար խաղաղութիւն եւ առողջութիւն մաղթելով շնորհակալութիւն յայտնեց Քաղաքապետարանի կողմից Ամանորի առթիւ ստացած եւ ս. Ամենափրկչեան վանքի ու մօտակալ տարածքներում տեղադրուած շնորհաւորանքների կապակցութեամբ, միաժամանակ յիշեցրեց, որ ազգային իշխանութիւնը յատուկ յայտարարութեամբ դիմել է հայ ընտանիքներին՝ Ամանորեայ հանդիսութիւններն աւելի զուսպ եւ պաշտօնաւար կազմակերպելու եւ իսլամական սզոյ օրերն աւաւել յարգելու նպատակով:

Ընդհանուր քաղաքապետ պրն. Սաղայեան-Նեժդը, երկրորդեց առաջնորդ Սրբազան Հօր խօսքերը եւ ասաց, որ եթէ աշխարհում կան անցանկալի իրավիճակներ եւ դժբախտութիւններ, այդ բոլորը մարդու ներքին ապրումների անզուսպ պոռթկումների հետեւանքով են լինում, որոնցից խուսափելու համար պէտք է անսալ եւ հետեւել Աստծու եւ Նրա մարգարէների միջոցով մարդկութեանը փոխանցուած պատուիրաններին: Պրն. Սաղայեան-Նեժդըն իր շնորհաւորանքները փոխանցեց Ամանորի եւ ս. Ծննդեան տօների առթիւ, աշխարհին մաղթելով խաղաղութիւն ու սէր, ինչի համար աշխարհ եկաւ Քրիստոսը:

Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանն եւս իր հերթին ուրախութիւն յայտնեց երկու քաղաքապետերի այցելութեան առթիւ: Նա ներկայացնելով հայ համայնքի կողմից հանդիպմանը ներկայ անձանց, հակիրճ բացատրութիւններ տուց ազգային մարմինների, մարզա-մշակութային եւ կանանց միութիւնների գործունէութեան մասին՝ բարձր գնահատելով նրանց ներկայան աշխատանքն ու ձեռքբերումները հայ եւ իրանական կեանքի մէջ:

Հանդիպման աւարտին, պրն. Սաղայեան-Նեժդըն յուշանւէրներ յանձնեց եւ ս. Ամենափրկչեան վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարանի առջեւ հաւաքական կերպով լուսանկարելուց յետոյ, հրաժեշտ տուց ազգային առաջնորդարանի պատասխանատուներին:

### ՍՊԱՅԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԱՅՅՈՒ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Չորեքշաբթի՝ 2014 թականի յունուարի 22-ի ժամը 14-ին, Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհուած հայ նահատակներից Վրէժ Բաղումեանի ընտանիքի պարագաներին այցելելուց յետոյ, ս. Ամենափրկչեան վանք ժամանեց Սպահան, Եագոյ եւ Չհարմահալ նահանգների բանակի ընդհանուր հրամանատար Ռեզա Ջեհադին, ընկերակցութեամբ գնդապետ Քեառիմ-զադեհի, գնդապետ Քազեմիի եւ կապիտան Մոհամմադեանի:

Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում պատիւրակութեանն ընդունեց Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանը: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, Հաշտեմնիչ մարմնի ատենապետերն ու ներկայացուցիչները:

Սկզբում հրամանատար Ջեհադին իր ուրախութիւնը յայտնեց առաջին անգամայ համար ազգային առաջնորդարան այցելելու առթիւ, միաժամանակ իր շնորհաւորանքները փոխանցեց Ամանորի եւ ս. Ծննդեան տօների կապակցութեամբ: Նա խօսելով բանակի ընդհանուր գործունէութեան մասին, շեշտեց. *«Յատուկ կարգադրութեամբ՝ բանակի հրամանատրութեան կողմից շարունակ ուշադրութեան կենտրոնում են երկրի ամբողջականութեան ու անվտանգութեան ոլորտներում գոհաձնների ընտանիքները, որոնց զանազան միջոցներով փորձում ենք նեցուկ հանդիսանալ եւ օժանդակութիւն ցուցաբերել: Տարբերութիւն չընելով Իրանի բոլոր քաղաքացիների միջեւ, նոյն կարեւորութեամբ վերահասու ենք լինում կրօնական փոքրամասնութիւնների, այս պարագային հայ նահատակների ընտանիքների խնդիրներին, որի համար գոյութիւն ունի զօրքի անձնուրացների խնդրով զբաղող գրասենեակ»:* Հրամանատար Ջեհադին շեշտեց, որ զօրքի մէջ իրենց զինուորական ծառայութիւնն անցկացնող հայ բանակայիցների նկատմամբ յատուկ յարգանք է ցուցաբերում, այնպէս որ երկրի կրօնապետի յատուկ կարգադրութեամբ Ամանորեայ

տօներին բոլոր հայ զինուորներին արձակուրդ տրուեց՝ տօնական օրերն իրենց ընտանիքների հետ անցկացնելու: Նա խօսելով Իրանի Իսլամական Հանրապետութիւնում միասուլածեան կրօնների հետեւորդների խաղաղ համագոյակցութեան կարեւորութեան մասին, շեշտեց, որ այդ միասնականութեանը եւ գիտակցութեանը որպէս արդիւնք՝ երկիրն ունի կայուն եւ ապահով կարգավիճակ, որի պատճառով զուր են անցնում թշնամիների բոլոր դաւադրութիւնները: Զօրապետը առաջնորդ Սրբազան Հօրը խնդրեց, որ հայ համայնքին փոխանցի իր եւ իր գործակիցների շնորհաւորանքները Ամանորեայ տօների կապակցութեամբ, միաժամանակ շնորհակալութիւն յայտնեց հայ համայնքին, որ իր գործօն ու ներկայան մասնակցութիւնն է բերել Իրանի Իսլամական Հանրապետութեան ամբողջականութեան եւ անկախութեան պաշտպանութեան գործում եւ անհրաժեշտութեան դէպքում երիտասարդ կեանքեր նւիրել երկրի անվտանգութեան զոհասեղանին:



Թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարբէն ապս. Չարեանը ողջունելով հիւրերի ներկայութիւնը Ազգային առաջնորդարան, խիստ կարեւորեց նրանց ծառայական ոլորտը՝ երկրի կայունութեան եւ ամբողջականութեան պահպանման գործում, բոլորին մաղթելով անփորձանք ծառայութիւն եւ զօհութիւն: Նա շեշտեց, որ Իրանում ապրող հայ համայնքի անդամները, ինչպէս որ անցեալում իրենց ամբողջական ներդրումն են ունեցել ամենատարբեր ասպարէզներում, այսօր եւս պատրաստ են նոյն գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ նեցուկ կանգնել երկրի գերիշխանութեանը՝ ազատութեան եւ անկախութեան պահպանման համար: Գերշ. Սրբազան Հայրն ատելացրեց, որ Ամանորեայ տօնական օրերին տեղի ունեցած եկեղեցական արարողութիւնների ընթացքում աղօթել է իրանեան հայրենիքի անվտանգութեան եւ կայունութեան ճանապարհին ծառայող բոլոր ուժերի համար, եւ յոյս յայտնեց, որ միասնական ճիգերով միջազգային մակարդակով ամբողջապէս ճանաչելու եւ յարգելու են Իրանի ժողովրդի բոլոր արդար ցանկութիւններն ու իրաւունքները:

Հիւրասիրութեան ընթացքում, մտերիմ մթնոլորտում եւ զինուորական յուշերի միջից ակնարկեց փոխադարձ այն վստահութեանն ու յարգանքին, որ գոյութիւն ունի իսլամ եւ քրիստոնեայ բանակայիցների միջեւ, որը համարում է անհրաժեշտութիւն եւ դրական երեւոյթ՝ երկրի բանակում ծառայող Իրանի բոլոր քաղաքացիների համար:

ՀԱՆԴԻՊՈՒԹ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

Կիրակի՝ 2014 թվականի փետրվարի 9-ին, Իրանի իսլամական յեղափոխության յադթանակի 35-ամեակի առթիւ, Թեմական Խորհրդի հրաւերով ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում հանդիպում տեղի ունեցաւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազի ընթացքում զոհած հայ նահատակ զինուորներ՝ Հենրիկ Տէր Յովհաննիսեանի, Հրաչ Յակոբեանի, Ռայմոնդ Բաղրամեանի, Վարդան Աբրահամեանի եւ Վրէժ Բաղումեանի ընտանիքների հետ: Նրանց ընդունեցին Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերն ու անդամները:



րեալ պատերազմի տարիներին եւ յայտնեց. «Մեր պատմութեան տարբեր ժամանակահատուածներում ունեցել ենք նահատակներ, մեր եկեղեցին նահատակների արեամբ հիմնած եկեղեցի է: Մեր նահատակները յանուն վեհ գաղափարների, յանուն Յիսուսի եւ իրենց հաւատի, արժանապատուութեան, հողի եւ ժողովրդի, ընծայաբերել են իրենց կեանքը»: Իսկ վերջում շեշտեց. «Մեր պարտականութիւնն է նշելու, յիշելու եւ մեծարելու մեր նահատակներին, մաղթելով նրանց ընտանիքներին ուժ ու կորով, որպէսզի կարողանանք միասնաբար եւ հաւաքաբար որպէս ազգ եւ հայրենիք, պարենք եւ շարունակենք մեր յաղթական երթը»:



Թեմական խորհրդի ատենապետ պրն. Նուէլ Մինասեանը ողջունելով նահատակների ընտանիքների ներկայութիւնը, մեծ հերոսութիւն համարելով նրանց զաւակների սխրանքն ու անձնագոհութիւնը, նշեց. «Հասարակութիւնների համար մեծ նշանակութիւն ունի անհատների պատասխանատուութեան զգացումը եւ ընտանիքը այն միջավայրն է, որտեղ անհատի մէջ զարգանում է այդ կարեւոր ըմբռնումը, ուստի մեր յարգանքն ու երախտագիտութիւնն ենք յայտնում Ձեզ գիտակից սերունդ դաստիարակելու համար, համոզւած լինելով, որ նահատակներին յարգելը եւ մեծարելը նաեւ ազգային արժէք է»:


Այնուհետեւ արտայայտեց Պատգամաւորական ժողովի դիւանի փոխ-ատենապետ՝ պրն. Մկրտիչ Աւետումեանը, որը յիշելով հայրենիքի պաշտպանութեան ճանապարհին իրենց կեանքը նիւրաբերած նահատակների քաջագործութիւնը, այն արդիւնքը համարեց ընտանիքների գիտակից եւ պատասխանատու սերունդ դաստիարակելու գործի:

Նահատակների ընտանիքները շնորհակալանքի եւ երախտագիտութեան խօսքեր ուղղեցին ազգային իշխանութեանը, որոնք մշտապէս ուշադրութիւն են դարձնում իրենց եւ փորձում լուսազոյն կերպով վառ պահել իրենց զաւակների յիշատակը:

Հանդիպման ասարտին, գերշ. Սրբազան Հօր ձեռամբ Նոր Կտակարան եւ աղօթագիրք յանձնեցին ներկաներին:



Գերշ. Սրբազան Հայրն օրհնանքի խօսք փոխանցելով նահատակ զինուորների ընտանիքներին, անդրադարձաւ Իրան-Իրաք պարտադր-





# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆ-ՔՈՒՄ



Չորեքշաբթի՝ 2014 թականի փետրուարի 19-ին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դկտ. Օլա Դ-իթը, ընկերակցությամբ խորհրդի Ասիոյ շրջանի պատույ նախագահուհու եւ այլ ներկայացուցիչների, այցելեց ս. Ամնափրկչեան վանք: Պատիրակութեանը մաս էին կազմում նաեւ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանը եւ առաջնորդական փոխանորդ գերպ. Տ. Մակար ծ. վրդ. Ազգարեանը: Պատիրակութիւնը պաշտօնական ճաշի հիւր եղաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդին եւ ազգային մարմիններին:

Պաշտօնական ճաշի ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալստեան խօսք արտասանեց՝ ուղղւած պատիրակութեան անդամներին: Նա առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանին՝ այցելութեան համադրման համար, ապա Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների, կառույցների, միութիւնների եւ եկեղեցիների գործունէութեան մասին խօսելուց յետոյ, յատուկ շնորհակալութիւն յայտնեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարին, առ այն, որ խորհուրդը 2015 թականին կազմակերպելու

է միօրեայ սեմինար եւ աղօթքի օր՝ 1915 թականի Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին եւ հայ նահատակների հոգիների խաղաղութեան համար:



Պաշտօնական ճաշկերպի ընթացքում յաջորդաբար խօսեցին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Օլա Դ-իթը, Ասիոյ շրջանի պատույ նախագահուհին եւ տարբեր յանձնաժողովների ներկայացուցիչներ: Պատիրակութեան անդամներն իրենց ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեցին ջերմ ընդունելութեան համար եւ յատկապէս դրատեցին հայ ժողովրդի, ի մասնաւորի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դերը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունէութեան շրջանակում:

Պաշտօնական ճաշկերպի ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրը, ազգային մարմինների անունից, յուշանւէրներ յանձնեց պատիրակութեան անդամներին:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

2014 թականի յունարի 1-ի առաջին պահերին՝ առաւօտեան ժամը 30 րոպէին, Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, բազմաթիւ հաւատաւոր հայորդիների եւ արտերկրացի քրիստոնէայ զբօսաշրջիկների ներկայութեամբ, թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի նախագահութեամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, աղօթք բարձրացւեց առ Աստուած՝ Ամանորի առթիւ:



Առաջնորդ Սրբազան Հայրը գոհաբանական մաղթանք կատարեց տարեմուտի առթիւ եւ իր շնարհաւորանքի խօսքը փոխանցեց բարեպաշտ ժողովրդին: Նա փառք տուեց Աստծուն, որ մեզ արժանի դարձրեց տարեմուտի գեղեցիկ եւ երանական պահին եւ Շնորհալի Հայրապետի բառերը փոխ առնելով՝ աղօթեց, որ Քրիստոսը, որպէս հնութիւնների Նորոգողը՝ նորոգի նաեւ մեզ եւ մեր կեանքը՝ նորոգութիւնը անհրաժեշտ նկատելով մեր մարդկային կեանքի մէջ:



Գերշ. Սրբազան Հայրը գնահատեց հաւատացեալների ներկայութիւնն ու մասնակցութիւնը եկեղեցական արարողութեանը՝ Նոր Տարւայ առաջին պահերը Տիրոջ տան մէջ անցկացնելու նպատակով: Նա յիշեց բոլոր ննջեցեալներին, հիւանդներին, տկարներին, աղքատներին ու անկեալներին, որպէսզի Աստուած նրանց արքայութիւն, առողջութիւն եւ վերականգնում շնորհի: Առաջնորդ Սրբազան Հայրն աղօթեց աշխարհի եւ մասնաւորաբար Սուրիոյ, Լիբանանի եւ ամբողջ տարածաշրջանի խաղաղութեան համար: Աղօթեց նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան բարձրաստի-

ճան պատասխանատուների համար, որպէսզի պահպանեն իրանեան այս հայրենիքի ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, առաջնորդ Սրբազան Հայրը, իբրեւ Ամանորեայ նւէր, ներկաներին բաժանեց աղօթագրքեր:

ՃՃՃ ԱՅՅՅ

Յունարի 1-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ամանորի առթիւ եպիսկոպոսական Ս. Պատարագ մատուցեց Ս.Ա. Վանքի եկեղեցում: Պատարագիչն էր թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, որին սպասարկում էին արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկերեանը եւ արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը: Ս. Պատարագի երգեցողութեան բաժինը կատարում էր Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Գերշ. Սրբազան Հայրը Ս. Պատարագի ընթացքում բնաբան ունենալով ւսետարանական այն հատուածը, որտեղ ասում է. «Մեր աչքերն ուղղենք Յիսուսին՝ մեր հաւատի հիմնադրին, այն կատարեալագործողին, որը իմանալով թէ ինչ ուրախութիւն է սպասում իրեն, արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ

մեռնելը եւ նստեց Աստուծոյ աթոռի աջ կողմում» (Եբր 12.2), իր հայրական պատգամը փոխանցեց հաւատացեալներին՝ ասելով. «2014 տարին է բացուում մեր առջեւ. նոր հորիզոններ, նոր յոյսեր, նոր մարտահրաւէրներ... Մտաբերենք, որ ամէն օր մի նոր պատերազմի մէջ ենք ներքաշուելու, ամէն օր նոր մրցավազքի մէջ ենք լինելու: Սակայն, եթէ մեր հայեացքը սեւեռենք Յիսուս Քրիստոսին, չենք յուսահատուելու, չենք յոգնելու մեր վագքի մէջ, որովհետեւ այդ վագքը մեզ հասցնելու է դէպի Նաչ՝ վերջնագծին, որից յետոյ նստելու ենք Յիսուս Քրիստոսի կողքին՝ երկնքում, Դրախտում, եւ մեր գործն աւարտին է հասնում եւ շահելու ենք վերջնական յաղթանակը: Եկէք մեր աչքերը Յիսուսին ուղղենք» 2013 թվականի մայրամուտի եւ 2014 թվականի արշալոյսին: Եւ վստահ լինենք որ, Նա է մեր հաւատի Առաջնորդը, Իրմով միայն կարող ենք ժառանգել յաւիտենական կեանքը եւ Իրմով միայն կարող ենք բարձրանալ եւ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԻՅԵԼ...: Տօնական այս օրերին մեր պարտքն է մտածելու մեր հարազատների ու բարեկամների մասին, մտածելու նաեւ տկարի, հիւանդի, կարօտեալի մասին, ու աղօթելու նրանց համար եւ օգնելու նրանց, որպէսզի Աստուծոյ նրանց քաջառողջ կեանք եւ հոգեկան խաղաղութիւն եւ անդորրութիւն պարգեւի: Նման հանգրւանում, հարկ է որ յիշենք նաեւ մեր ազգի բոլոր ննջեցեալներին եւ աղօթենք նրանց հոգիների խաղաղութեան համար. նրանց, ովքեր անցեալ տարի մեզ հետ էին ու այսօր չկան: Դրանով մենք առաւել կը գործնանք»:

Ս. Պատարագի ընթացքում Ս. Հաղորդութիւն ստացան ներկայ հաւատացեալները, իսկ արարողութիւնից յետոյ, Ս.Ա. Վանքի դահլիճում Առաջնորդ

Սրբազան Հայրն ընդունեց Ամանորեայ շնորհաւորանքներ: Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբն իր ամանորեայ շնորհաւորանքն ընթերցեց, որից յետոյ արտայայտեց Իրանի Իւլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը՝ բարեմաղթանքներ կատարելով Նոր Տարւայ առթիւ: Գերշ. Սրբազան Հայրը, այս անգամ մտերմիկ միջավայրում, իր ջերմ շնորհաւորանքները փոխանցեց ներկաներին եւ «Կիլիկիա» երգով աւարտեց խօսքերի շարանը: Ներկայ բազմութիւնը մօտենալով՝ Ամանորի առթիւ շնորհաւորեց Առաջնորդ Սրբազան Հօրը, հոգեւորականաց դասին եւ ազգային իշխանութեան անդամներին:



Տարւայ առաջին օրը, հաւատացեալներն աղօթքով եւ Աստծուն գոհութիւն մատուցելով սկսեցին ուրախութեամբ, սրտի եւ հոգու բաւարարութեամբ, յոյս ունենալով, որ գալիք տարին Աստծու օգնականութեամբ լինելու է խաղաղութեան տարի:



## ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ

Ուրբաթ՝ 2014 թվականի յունւարի 3-ին, Սպահանի հալոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, ընկերակցութեամբ Պատգամաւորական ժողովի դիւանի եւ Թեմկան խորհրդի ատենապետեր Վարուժ Մինասեանի եւ Նոէլ Մինասեանի, Ամանորի առթիւ այցելութիւն տուեց Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհուած հայ նահատակների ընտանիքներին:

Հանդիպումների ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրը եւ ազգային իշխանութեան պատասխանատուները, նահատակների ընտանիքի անդամներին շնոր-

հաւորեցին Ամանորի եւ Աստուածայայտնութեան տօների կապակցութեամբ եւ ջերմ բարեմաղթանքներ փոխանցեցին՝ նրանց համար մաղթելով առողջութեամբ ու երջանկութեամբ ողողած տարի եւ երկար կեանք:

Այսպիսով ազգային առաջնորդարանի պատասխանատու կազմը ցանկացաւ 2014 թվականի առաջին օրերին վայել կերպով արժեւորել համայնքի այն անձնազոհ ընտանիքներին, ովքեր մեր ներկայ տարիներին խաղաղութեան եւ ապահովութեան համար թանկ գին են վճարել: Թող Աստուած իր արդարութեամբ եւ ողորմածութեամբ հատուցի նրանց նիւրումը:

ՃՐԱԳՎԱՈՅՅԻ, Ս. ԾՆՆԻԵԱՆ ԵՒ ԱՍՏԻՎՃԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԵՒ ԶՐՈՐՀՆԷՔԻ ԱՐԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒՄ



Կիրակի՝ յունարի 5-ի կեսօրից յետոյ ժամը 4-ից, երեկոյեան ժամերգութիւն եւ Ճարգալոյցի Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Աստածածին, Ս. Ներսէս, Ս. Ստեփանոս եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում, նաեւ Շահինշահի «Արբոց Վարդանանց» դպրոցի սրահում: Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցու Ս. Պատարագին, ուր իր հայրական պատգամը յղեց ներկաներին: Յաարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ նախատօնակ եւ անտում՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան:



Նոյն օրը, կէսօրից յետոյ եւ երեկոյեան, Զրօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Նոր Զուղայի միւս եկեղեցիներում:



Երեկոյեան ժամը 5:30-ին, գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի նախագահութեամբ Զրօրհնէքի կարգ կատարեց առաջնորդանիստ Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, որից յետոյ, առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում Արբազան Հայրն ընդունեց Ս. Ծննդեան տօնի առթիւ շնորհատրանքները:



Այնուհետեւ երկուշաբթի՝ յունարի 6-ի առաւօտեան, Նոր Զուղայի Ս. Բեթղէմի, Ս. Մինաս եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում ու Շահինշահի «Արբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցեց Ս. Պատարագ՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստածայայտնութեան տօների առիթով:

Առաջնորդ Արբազան Հօր ձեռամբ եպիսկոպոսական հանդիսատր Պատարագ մատուցեց Ս. Բեթղէմի եկեղեցում, որտեղ օրան պատշաճ իր պատգամը փոխանցեց ներկայ հաւատացեալներին: Թեմակալ առաջնորդի պատգամն ընթերցեց նաեւ միւս եկեղեցիներում, իսկ յաարտ Ս. Պատարագի կատարեց Զրօրհնէքի արարողութիւն:



Վերոնշեալ բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թուով հաւատացեալներ:



Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՏՕՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս. Յովհաննու Կարապետի ծննդեան տօնի առիթով, որը նաեւ Նոր Զուղայի Ս. Յովհաննէս Մկրտիչ (Ս. Յովհաննու Կարապետ, Աջի ժամ) եկեղեցու անանկրչութեան տօնն էր, երեքշաբթի՝ 2014 թականի յունարի 14-ին, սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց ծխատէր քահանայ արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկէրեանը: Ս. Պատարագին նախագահում էր Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը:

Յընթացս սուրբ Պատարագի օրան պատշաճ քարոզեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը: Հաւատացեալ ժողովրդին ուղղած իր պատգամի մէջ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը պատմական ակնարկ նետեց Յովհաննէս Մկրտչի ծնունդի, կեանքի, զօրաւոր նկարագրի, առաքելութեան եւ գործունէութեան վրայ, ով ներկայացաւ իբրեւ նախակարապետը մեր տիրոջ եւ փրկչի՝ Յիսուս Քրիստոսի, եւ յաւիտեանական թագաւորութեան ճանապարհը պատրաստողը: Գերշ. Սրբազան Հայրը շեշտելով Յովհաննէս Մկրտչի գործունէութեան առանցքը եղող՝ ապաշխարութեան գաղափարի վրայ, պատգամեց, որ այն պէտք է մնայուն ներկայութիւն եւ ապրելակերպ լինի իւրաքանչիւր քրիստոնէայի կեանքի մէջ:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ Զրօրհնէք

ս. Յովհաննէս Մկրտչի աջ-մասունքով:



Արարողութիւնից յետոյ, կանանց յանձնախմբի միջոցով համեստ հիւրասիրութեամբ եկեղեցու սրահում կազմակերպել էր սիրոյ սեղան՝ որտեղ սրտի խօսք արտասանեց արժն. Տ. Վազգէն քինյ. Քէօշկէրեանը, կամաւոր երգողներ գեղարուեստական կոկիկ յայտագիր ներկայացրին եւ վերջում առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական օրհնանքով եւ խօսքով եզրափակեց ծրագիրը:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԾՆԵՐԻ ՏԱՐԻԱՅ» ՀՈՉԱԿԱԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ



Շաբաթ՝ յունարի 18-ի երեկոյեան, Նոր Զուղայի ս. Գէորգ եկեղեցում, Կիրակնամուտի ժամերգութեան աւարտին, ներկայութեամբ հոգեւորականաց դասի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ հաւատացեալ ժողովրդի, ինչպէս նաեւ Հայոց ազգային ծերանոցը կառավարող Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան անդամուհիների, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի միջոցով ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի հայրապետական գիրը՝ 2014 թականը «Տարեցների

տարի» հոշակելու կապակցութեամբ:

Սույն հոշակագրում Վեհափառ Հայրապետն անդրադառնալով Աստուածաշնչում եւ եկեղեցու կեանքում յիշատակած տարեցներին ու նրանց դերակատարութեանը, անհրաժեշտ էր համարել այս խաւին պաշտպանելը, յարգելը, լսելն ու խնամելը, թելադրելով անհրաժեշտ հոգածութիւն ցուցաբերել նրանց հանդէպ, խորացնել յատկապէս նոր սերնդի մօտ տարեցների նկատմամբ ունեցած յարգանքը, սէրն ու նախանձախնդրութիւնը, նիւթապէս աստարել գործող ծերանոցների ու ընկերա-բժշկական կենտրոնների գործունէութեանը եւ տարեցների գծով հոգածութիւնն աւելի կազմակերպ դարձնելու մտահոգութիւնից մղւած՝ նոր ծրագրեր մշակել՝ արդիական ու մասնագիտական մօտեցումներով:

Սրբատառ հոշակագրի ընթերցման աւարտին առաջնորդ Սրբազան Հայրը, ողջունելով Վեհափառ Հայրապետի մտայղացումը՝ 2014 թականը «Տարեցների տարի» հոշակելու կապակցութեամբ, յայտարարեց, որ այս առնչութեամբ աշխատանքներ եւ գործնական քայլեր են իրագործելու՝ աւելի խորացնելով մեր սէրն ու յարգանքը տարեցների՝ մեր հայրերի ու մայրերի նկատմամբ:





ՏԵԱՌՆԸ ՆԻԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՈՆԱԿԸ  
ՀԱՆՐԱՊԱՌԹԵԱՄԲ ՆՇԻՆՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Հինգշաբթի՝ փետրվարի 13-ի երեկոյան ժամը 4-ին, Նոր Զուղայի ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահությամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Բաբգէն եպս. Զարեանի տեղի ունեցաւ Տեառնընդառաջի նախատօնակ եւ աւանդական հրավառութիւն՝ եկեղեցու շրջափակում: Երգեցողութիւնը կատարեց ս. Ամենափրկիչ Վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ ղեկավարությամբ Համիկ Ալեքսանդրեանի:

Արարողութեան ընթացքում քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը: Սկզբում նա անդրադառնալով փրկչի՝ Քրիստոսի աշխարհի գալուստի անելացրեց, որ Աստուած այնքան էր սիրում մարդուն, որ Իր Միածին Որդուն որպէս Փրկիչ աշխարհի ուղարկեց, որպէսզի մարդը վերադառնայ Աստծուն: Պատգամի շարունակութեան մէջ թեմակալ առաջնորդն անդրադառնալով Քրիստոսի տաճար ընծայմանը եւ Տեառնընդառաջ տօնին՝ անելացրեց. «Պատրա՛ստ ենք այսօր Միմէ՛ն ծերունու նման Տիրոջը դիմաւորելու մեր կեանքում, մեր սրտերում եւ մեր հոգիներում, հետեւելու եւ ընդունելու նրան՝ որպէս յաւիտենական եւ անմար լոյս: Մի լոյս, որը լուսաւորելու է մեր խաւարած մտքերն ու հոգիները, մեր սրտերն ու ճանապարհը»:

Արարողութեան աւարտին Սրբազան Հօր միջոցով տեղի ունեցաւ նորածինների տաճար ընծայման խորհրդաւոր կարգը, ապա աւանդական հրավառութիւն:

Հարկ է նշել, որ Տեառնընդառաջի նախատօնակը պատշաճ արարողութեամբ եւ աւանդական հրավառութեամբ նշեց նաեւ Նոր Զուղայի ս. Մինաս, ս. Յովհաննու եւ ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում:

Հոգեպարար արարողութիւնից յետոյ, նոյն օրը ժամը 7-ին, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, նախաձեռնությամբ թեմի Կրօնական խորհրդի եւ կազմակերպութեամբ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան տեղի ունեցաւ հրավառութիւն: Խարոյկը միասնաբար բոցավառեցին թեմակալ առաջնորդն ու անցնող տարւայ նորաստեղծ զոյգերը: Այնուհետեւ միութեան սրահում տեղի ունեցաւ ամենամեայ միջոցառումը, որտեղ

նորածիններն ու նրանց ծնողները եւ նորաստեղծ զոյգերը հանդիպեցին առաջնորդ Սրբազան Հօր եւ ազգային մարմինների ներկայացուցիչների հետ: Ծրագրին ներկայ էին նաեւ Ս. Մեսրոպ առ. քինյ. Գալստանեանը, Ս. Խաչատուր քինյ. Զարգարեանը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Կրօնական ու Թեմական խորհուրդների եւ շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչներն ու Նոր Զուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամները:



Սոյն միջոցառումը բացաւ յայտարարեց հանդիսավար Մանիա Ղուկասեանի բարեմաղթանքներով եւ ողջոյնի խօսքով: Այնուհետեւ Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան անունից ելոյթ ունեցաւ կազմի ատենապետ Ղուկաս Ծատուրեանը, որը շնորհատրելով տօնի կապակցութեամբ, բոլորին մաղթեց առողջութիւն եւ կանաչ ճանապարհ, ցանկանալով, որ օրւայ խարոյկի ջերմութեամբ ու թարմութեամբ ընթանայ ողջ տարին եւ հայ սերունդը ծաղկի ու հայեցի դաստիարակութեամբ կերտի իր ապագան:

Յաջորդիւ, յանուն թեմի Կրօնական խորհրդի արտայայտեց խորհրդի ատենապետ Արշալոյս Խոսրովբեկեանը: Նա իր խօսքում նշելով, որ ազգի ճակատագիրը հայ ծնողների ձեռքերում է, կարեւորութեամբ շեշտեց, որ եթէ հայ ծնողները կարողանան հայեցի դաստիարակութեամբ կրթել իրենց զաւակներին, այն ժամանակ ազգը յալիտեան երախտապարտ կը լինի նրանց:



Ծրագրի շարունակութեան մէջ Սրբազան Հօր եւ ազգային մարմինների ներկայացուցիչների հետ լուսանկարելուց յետոյ, թեմակալ առաջնորդի հետ միասնաբար նախ նորաստեղծ զոյգերը, ապա նորածինների ծնողները հատեցին իրենց համար նախատեսաւ կարկանդակները:

Շարունակութիւնը՝ 33-րդ էջում

### ՀԱՆՐԻՍԱՎԻՈՐ Ս. ՊԱՏԱՐԱՐԱԳ Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԿՎԱՐԻ ՏՕՆԻ ԿՌԹԻԻ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս. Սարգիս զօրավարի տօնի առթիւ Նոր Զուղայի համանուն եկեղեցում կատարւեց երկօրեայ արարողութիւն՝ ուրբաթ եւ շաբաթ, փետրարի 14-ին եւ 15-ին՝ հաւատացեալ ժողովրդի խուռներամ մասնակցութեամբ:



Տօնի նախօրէին՝ ուրբաթ, կէսօրից յետոյ ժամը 3-ին, ս. Սարգիս եկեղեցում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի ձեռամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, տեղի ունեցան աղօրհնէք եւ ոչխարների զենում, իսկ երեկոյեան ժամը 6-ին, Հսկումի արարողութիւն:

Շաբաթ՝ փետրարի 15-ին, ս. Սարգիս զօրավարի տօնի օրը, որը նաեւ համանուն եկեղեցու անւանակոչութեան տօնն է, առաւօտեան եպիսկոպոսական հանդիսաւոր եւ սուրբ Պատարագ մատուցւեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր միջոցով եւ մասնակցութեամբ քահանայից ու դպրաց դասերի: Երգեցողութեամբ հանդէս եկաւ ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Ս. Պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ Սրբազան Հայրը, ով անդրադառնալով ս. Սարգիս զօրավարի կեանքին ու սիրագործութիւններին, նշեց. «Յիսուսն ասել է՝ դուք պիտի չարչարանքներ կրէք եւ հալածանքների ենթարկւէք, բայց չյուսահատւէք ու մնացէք ամուր ձեր քրիստոնէական հաւատի մէջ: Ուստի ս. Սարգիսն իր գինւորների հետ դժարին կեանք ունեցաւ, բայց մնաց իր հաւատի մէջ եւ նահատակւեց: Ս. Սարգիսը խորհրդանշել է քրիստոնէական հաւատի, ընտանեկան սրբութեան: Այսօր՝ որպէս ուխտաւորներ, եկէք վերանորոգենք մեր քրիստոնէական հաւատը, կեանքում մեր հաւատով եւ մեր հաւատի ուժով յաղթահարենք բո-

լոր տեսակի դժարութիւնները»: Սրբազան Հայրն իր պատգամի աւարտին ս. Սարգիս բարեխօսութիւնը խնդրեց Տիրոջ առջեւ՝ բոլորին առողջ սիրով կեանք եւ ամուր ընտանիք պարգեւելու համար, որպէսզի մեր մեծ ընտանիքը՝ ազգը եւ եկեղեցին, օրըստօրէ աւելի ամրանայ եւ հզօրանայ:



Ս. Պատարագի աւարտին Սրբազան Հայրը հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, ս. Սարգիս զօրավարի աջի օրհնութեամբ կատարեց Զօրհնէքի արարողութիւն: Ներկայ հաւատացեալներն ստացան օրհնած ջրից:



Այնուհետեւ եկեղեցու բակում տեղի ունեցաւ մատուցողների արարողութիւնը եւ Մատաղի յանձնակալների միջոցով պատրաստած հարիսան ամաններով բաժանւեց ժողովրդին:



Յատկանշական է, որ ուխտաւորներից ցանկացողները, իրենց խորհուրդը կատարել էին նւիրատուութիւններով ու մատաղներով:

# ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԲԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Երեքշաբթի՝ 2014 թականի փետրարի 25-ին, սրբոց Ղեւոնդեանց քահանայից տօնին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Յովհաննու եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի: Պատարագեց Ծահինշահրի հայ համայնքի հոգետր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Քահանայական զգեստներ հագած՝ եկեղեցում ներկայ էին Սպահանի հայոց թեմի բոլոր քահանայ հայրերը, ովքեր թափօրի պահին լուսատուած մոմերով եւ պատարագիչ Հայր Սուրբի առջեւից քայլելով՝ իրենց օրհնութիւնը փոխանցեցին ներկայ հաւատացեալ ժողովրդին:



Նկատի ունենալով, որ սրբոց Ղեւոնդեանց տօնը, տօնն է քահանայութեան եւ քահանաների, պատարագիչ Հայր Սուրբն օրւայ պատշաճ իր քարոզը կենտրոնացրեց քահանայական պարտականութեան եւ պատասխանատուութեան վրայ, բնաբան ունենալով անտարանական այն հատւածը, որտեղ Յիսուս Քրիստոսն Իր խօսքն ուղղելով իր աշակերտներին եւ նրանց միջոցով՝ ամբողջ քրիստոնեաներին եւ յատկապէս հոգետր հովիւներին, ասում է. «Ամէն իշխանութիւն

տրեց ինձ երկնքում եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրն ինձ ուղարկեց, այնպէս էլ ես ձեզ եմ ուղարկում: Գնացէ՛ք, ուրեմն, եւ բոլոր ժողովուրդներին իմ աշակերտները դարձրէ՛ք: Մկրտեցէ՛ք նրանց Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Սովորեցրէ՛ք նրանց այն բոլոր պատւիրանները, որ տւեցի ձեզ: Եւ ահա ես ձեզ հետ կը լինեմ միշտ՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մտ 28.18-20), այնուհետեւ անդրադարձաւ Ղեւոնդեանց քահանաների ունեցած դերակատարութեանը հայոց պատմութեան մէջ եւ ասաց. «Ղեւոնդ երէցի գլխաւորութեամբ հոգեւորականները, այն յոյսի ու հաւատի մարմնացումը դարձան հայոց գործի մէջ, որով նրանք կարողացան վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ պայքարել եւ անձնուրացարար իրենց կեանքն ընծայարբել, որպէսզի այսօր մենք կարողանանք մեր եկեղեցիներում «Հայ մեր» ասել, խաչակնքել եւ Յիսուս Քրիստոսի անունը բարձրաձայն յայտարարել ամենուրեք»:



Հոգշ. Հայր Սուրբն անդրադառնալով նաեւ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու հոգետր եւ ազգային բնոյթին՝ սրբոց Ղեւոնդեանց գործունէութիւնն եւս որակեց իբրեւ փաստ եւ վկայութիւն այս իրականութեան համար: Նա շնորհատրելով քահանաներին իրենց տօնի առիթով, այսպէս շարունակեց. «Հոգեւորականն արժեւորուած է ո՛չ թէ իր զգեստով, գաւազանով ու խաչով, այլ՝ իր հօտի ներկայութեամբ, նրանց գորակցութեամբ եւ նրանց ծառայելով ու հոգեւոր կարիքները հոգալով: Հոգեւորականն իր ծառայական կարողութիւնն ստանում է նաեւ իր ժողովրդի ազօթքներէրց»:

Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գու-

ճանեանը, յատուկ կերպով շնորհաւորեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպ. Չարեանին, նկատի ունենալով, որ 2014 թականին լրանում է նրա քահանայական գործունէութեան 30-ամեակը եւ իբրեւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ պաշտօնավարելու 10-ամեակը՝ նրան մաղթելով երկար արեւշատ օրեր, բեղուն ծառայութիւն եւ պայծառ ապագայ:



Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ եկեղեցուն սպասարկած բոլոր քահանայ հայրերի հոգիների խաղաղութեան համար, իսկ արարողութիւնից յետոյ ներկայ հաւատացեալները մօտենալով հոգեւորականաց դասին, իրենց շնորհաւորանքն ու բարեմաղթութիւնը փոխանցեցին նրանց:



Պայծառ եւ արեւոտ օր լինելով, Նոր Զուղայի Հայոց Եկեղեցեաց Վարչութիւնը ս. Յովհաննու եկեղեցու բակում կազմակերպել էր հիւրասիրութիւն, որի ընթացքում սրտի խօսքեր եւ շնորհաւորանքներ արտա-

սանեցին Կրօնական Խորհրդի անդամ պրն. Սարգիստի Յովհաննիսեանի եւ Եկեղեցեաց Վարչութեան ատենապետ պրն. Ղուկաս Ծատուրեանի միջոցով: «Շուշանիկ» երգչախումբը, ղեկավարութեամբ օրդ. Անուշ Յովհաննիսեանի, երկու գեղեցիկ խմբերգեր ձօնեց հոգեւորականներին:



Աւարտին, առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորական եւ շնորհակալական խօսքերով եզրափակեց հանդիսութիւնը՝ իր խօսքի մէջ ասելով. «Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի լինելով՝ տարբերուում է միւս եկեղեցիներից. այն պատկանում է ազգին ու ժողովրդին, որով Հայոց եկեղեցու գաւակներն առաւել կապած պէտք է լինեն եկեղեցուն եւ հոգատար՝ նրա նկատմամբ: Ամեակաները, թւերն ու տօները առիթներ են, որպէսզի մենք՝ հոգեւորականներս մեր ուխտը վերանորոգենք, որովհետեւ հոգեւորականներս կոչւած ենք մեր կրօնի եւ եկեղեցու ճամբով ծառայելու մեր սիրեցեալ ժողովրդին: Իւրաքանչիւր հոգեւորական էրբ ծոնկի է եկել եկեղեցու ս. Խորանի առջեւ՝ իր վրայ վերցնելով քահանայական պարտականութիւնը, ուխտել է նւիրումով ու զոհողութեամբ սպասարկել Աստծուն, եկեղեցուն եւ ժողովրդին»:



Նոր Զուղայի հայոց եկեղեցեաց վարչութիւնը յուշանւերներ էր պատրաստել հոգեւորականաց դասի համար, որոնք գերշ. Սրբազան Հօր ձեռամբ յանձնեցին նրանց:

### ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԹԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ



Հինգշաբթի՝ փետրվարի 27-ի առաւօտեան, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցում, Վարդանանց տօնի առթիւ, ձեռամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քինչ. Գալստանեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի մատուցւեց ս. Պատարագ: Երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Արարողութեանը ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները, «Արմէն» տարրական կրթահամալիրի 5-րդ ու 6-րդ դասարանների եւ «Քանանեան» աղջ. ու «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտ-ուսիները, տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, ծնողական խորհուրդներն ու հաւատացեալ ժողովուրդ:

Յընթացս արարողութեան պատարագիչ քահանայ հայրը հանդէս եկաւ օրան պատշաճ քարոզով: Նա իր խօսքն սկսեց պատմագիր Եղիշէից Վարդանանց պատերազմի մասին վկայութիւնների մէջբերմամբ, այնուհետեւ անդրադառնալով Վարդան Մամիկոնեանի եւ նրա զինակիցների ամուր հաւատքին, հայ ազգի եւ Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցու դարեր շարունակ գոյատեւման կարեւոր գրաւականը համարեց Վարդանանց սխրագործութիւնը եւ շարունակեց. «*Եթէ չլինէր Վարդանանց պատերազմը մեր ժողովրդի մէջ չէր ստեղծւի միասնութեան ոգին: Նրանք միասնական ոգով եկան, պայքարեցին եւ յաղթեցին: Այսօր մեզանից իւրաքանչիւրն անկախ իր տարիքից պարտականութիւն ունի ապրի հայեցիորէն եւ հաւատարիմ մնայ իր հաւատքին, ազգին, եկեղեցուն ու լեզւին*»:

Այնուհետեւ քահանայ հայրը յիշելով հայ ազգի պատմութեան տարբեր հանգրուաններում հայրենասիրութեան ճանապարհին նահատակւած քաջարի հերոսներին՝ ներկայ աշակերտներին յորդորեց Վարդանի հոգով ապրել եւ իսկական ժառանգորդները լինել հայ նահատակների:



### ԻՐԱՆԻ ԻՍԼ. ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ 35-ՐԳ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ ՆԻԻՐԻԱԾ ՄԻԶՈՑԱՌՈՒՄ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԳՊՐՈՅՈՒՄ

Իրանի իսլամական լեղափոխութեան յաղթանակի 35-րդ տարեդարձի առթիւ, նախաձեռնութեամբ Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական ու Աշակերտական խորհուրդների, կիրակի՝ փետրվարի 9-ի առաւօտեան ժամը 11:00-ին, հայոց ազգային կրթահամալիրի «Ալեմուշ

Տէրեան» սրահում իրականացւեց գողտրիկ միջոցառում: Ծրագրին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Թեմական, Կրօնական ու Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, Սպահան քաղաքի Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի պատկիրակութիւնը եւ դպրոցի պատասխանատուները, աշակերտներն ու ծնողները:





Միջոցառումը բացված յայտարարեց Իրանի Իսլամական Հանրապետության օրիներգի յոտնկայս ունկնդրությամբ, որից յետոյ յաղթապանծ յաղթանակի 35-ամեակի առիթով շնորհաւորանքի խօսքով հանդէս եկաւ դպրոցի փոխտեսուչ պրն. Ռուբէն Գրիգորեանը: Այնուհետեւ արտայայտեց դպրոցի տեսուչ պրն. Ադիբին, որը նույնպէս շնորհաւորելով «Ֆաջր»-ի տասնօրեակի կապակցությամբ, գլուխ խոնարհեց նահատակների՝ ի մասնաւորի Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի հայ նահատակների յիշատակի առջեւ: Ապա նա նշելով, որ իւրաքանչիւր միջնակարգ դպրոցի գերագոյն նպատակն է աշակերտներին բարձրագոյն կրթութեան համար նախապատրաստել ու նրանց մէջ բարոյական արժէքներ սերմանել, բացատրութիւններ տուց «Կատարինեան» դպրոցի առաւելութիւնների մասին, ընդ որում թւարկեց որակեալ ուսուցիչներ եւ ուսումնական արդիական սարքեր ունենալը, աշակերտների կրթական ու մարզական յաջողութիւնները եւ ազգային մարմինների ու ծնողների նիւթա-բարոյական հովանաւորութեան վայելումը:



Ծրագրում տեղ էր գտել գեղարուեստական բաժին՝ աշակերտական գեղեցիկ կատարումներով, որտեղ ասմունքով հանդէս եկան Միօ Ղազարեանը, Րաֆֆի Դիլանշեանը, Արթուր Աղախանեանը եւ Ալբրիկ Ղազարեանը՝ կատարելով Ռուբիկ Ջանանեանի Իրանի Իսլամական յեղափոխութեանը նկիրած բանաստեղծութիւններից, իսկ օրան համահունչ երգերի կատարմամբ ելոյթ ունեցաւ դպրոցի երգչախումբը եւ մէկ երգի մենակատարմամբ՝ Ալբրիկ Ղազարեանը: Երգեհոնի նագակցութեամբ կատարողներին ընկերակցում էր նոյն դպրոցի շրջանաւարտ Դրօ Տէր Մարտիրոսեանը: Աշակերտ Աննօ Բաբումեանի միջոցով ներկաներին առաւել ծանօթութիւն տրուց Իրանի յեղափոխական երգերի ստեղծման մասին:

Միջոցառման ընթացքում ելոյթով հանդէս եկաւ

ճաւ. Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի ուսումնական հարցերի օգնական պրն. Բանիլոհին, ով դրատանքի խօսք ասելով «Կատարինեան» դպրոցի եւ հայ աշակերտութեան մասին ու կարեւորութեամբ ընդգծելով Իրանում մուսուլման եւ ոչ մուսուլման աշակերտների հաւասարութեան փաստը, հայ աշակերտների առաւել զարգացման ուղղութեամբ մեծ նշանակութիւն տուց հայագիտական համահայկական օլիմպիադաներին մասնակցութեանը, իսկ դպրոցի գիտական մակարդակի աճի ցուցանիշը համարեց միջնակարգի երրորդ դասարանների աւարտական քննութիւնների թւանշանները:



Ծրագրի երկրորդ բաժնում դպրոցի գերագանցիկ աշակերտները գնահատագրեր ստացան ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր եւ ազգային մարմինների ու Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի ներկայացուցիչների:

Միջոցառումը եզրափակեց գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի հայրական պատգամով: Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորելով Իսլ. յեղափոխութեան 35-րդ տարեդարձի առիթի՝ նշեց. «35 տարի առաջ այսօր. *Խոմէյնին նոր էջ բացեց իրանեան պատմութեան ոսկեմատեանում: Նոր էջ, որը խորհրդանշում է Իրանի հողային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը, ազատութիւնը եւ յաղթանակը*»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ յիշեց ճաւ. իրանահայ քաջարի զաւակներին, ովքեր կատարելով իրենց քաղաքացիական պարտականութիւնը, Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի օրերին, մաս կազմեցին երկրի հողային ամբողջականութեան պաշտպանութեան գործին եւ բարձր պահեցին մեր ժողովրդի արժանապատուութիւնը: Թեմակալ առաջնորդն իր պատգամի աւարտին շնորհաւորելով գերագանցիկ աշակերտների յաջողութիւնների կապակցությամբ՝ գնահատանքի խօսք ուղղեց դպրոցի տնօրինութեանը, ուսուցչական կազմին եւ ծնողական խորհրդին՝ աշակերտներին իրենց ուսումնական գործում զօրակցելու համար:

«ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ՏՂԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Երեքշաբթի, փետրվարի 19-ի առաւօտեան ժամը 11-ին, Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» դպրոցի ուղեցոյց բաժնի աշակերտութիւնը, ընկերակցութեամբ Տ. Վազգէն քինյ. Քէօշկերեանը, դպրոցի՝ փոխ-տեսուչ Ռուբէն Գրիգորեանի, հայերէն առարկաների ուսուցիչ Վարուժ Մովսիսեանի եւ Ծնողական խորհրդի Հայ տարեցների տարւայ առթիւ այցելեցին Նոր Զուղայի հայոց ազգային ծերանոց:

*Նրանցից օրինակ վերցնելով գիտակցենք, որ մենք էլ ծերանալու ենք: Բարիով բոլորս հասնենք ծերութեան եւ զգաստանանք ու գիտակցենք, թէ կեանքի ասպարէզները եւ դժւարութիւնները մեզանցից ինչեր են պահանջում»:*



Սկզբում փոխ-տեսուչ Ռուբէն Գրիգորեանը շնորհակալութիւն յայտնեց ծերանոցը կառավարող Հայ Կանանց Գթութեան միութեանը եւ սոյն կենտրոնի աշխատակազմին, իրենց այցելութեան խնդրանքին ընթացք տալու համար, որով առիթ ընծայեց դպրոցի աշակերտներին օրը տարեցների հետ միասնաբար վայելելու:

Ապա աշակերտ Արայիկ Սիմոնեանն ընթերցեց տարեցներին նկրած մի յօդած, որը յուզեց սրահում ներկայներին՝ ի մասնաւորի ծերանոցի տարեց բնակիչներին, իսկ յաջորդիւ աշակերտները կատարեցին երկու երգ:



Միջոցառման շարունակութեան մէջ Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութեան փոխ-նախագահ Ֆլորա Ալլահվերդեանը ողջունելով աշակերտութեան այցելութիւնը ծերանոց՝ յոյս յայտնեց, որ նմանատիպ այցելութիւններ յաճախ տեղի կունենան:

Այնուհետեւ Տ. Վազգէն քինյ. Քէօշկերեանը ողջունելով դպրոցի պատասխանատուների ծերանոց այցելելու գեղեցիկ մտայղացումը՝ ասաց. *«Միբերի պապիկներ եւ տատիկներ, այսօր «Կատարինեան» դպրոցի ուղեցոյց բաժնի աշակերտները, իրենց տեսչութիւնը, ուսուցչական կազմն ու Ծնողական խորհուրդը եկել են ձեզ այցելելու եւ նայելու ձեր աչքերին ու ձեր սպիտակած սուրբ մազերին: Եկել են տեսնելու, թէ ինչ ճանապարհ էք կտրել մինչեւ այստեղ հասնելը: Այս այցելութիւնը նաեւ կեանքի դասարան է մեր աշակերտութեան համար»:*

Այնուհետեւ տղաները խանդավառաւ ստեղծած մթնոլորտից տարեցների հետ վայելեցին դպրոցի Ծնողական խորհրդի կողմից պատրաստուած պատուիկները:

Քահանայ հայրն իր խօսքի շարունակութեան մէջ անելացրեց. *«Արամ Ա Վեհափառը 2014 թվականը տարեցների տարի անւանելով նպատակ չունի միայն յարգել տարեցներին, այլ ցանկանում է*

ընթացքում արտայայտեց նաեւ ծերանոցի բնակիչ Էլիզ Մարտիրոսեանը, որը շնորհակալութիւն յայտնեց այցելութեան եւ ներկայացրած գեղեցիկ ծրագրի համար՝ պատանիներին յորդորելով՝ յարգել ու սիրել իրենց ծնողներին:

# ԴՆՆԻՎՅԻՑ ԺՎԱՄԱՆՎԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՅՑԸ ՆՈՐ ԶՈՒՂՎՅԻ ՀՎՅՈՑ ԿԶԳՎՅԻՆ ԿՐԹՎՀԱՄԱՎԻՐ



Երկուշաբթի՝ փետրարի 3-ի առաւօտեան, ընկերակցութեամբ Սպահանի նահանգի Ուսումնադաստիարակչութեան գերատեսչութեան եւ նոյն հիմնարկի Սպահան քաղաքի 3-րդ շրջանի ներկայացուցիչների, Նոր Զուղայի հայոց ազգային կրթահամալիր այցելեցին Դանիայի Մանկավարժական ֆակուլտետի շուրջ 50 ուսանողներ, ովքեր իրենց փորձաշրջանն էին անցկացնում Իրանում՝ երկրի ուսումնադաստիարակչութեան համակարգն ուսումնասիրելու նպատակով:



Սոյն այցելութեան մեկնարկը տուեց կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» սրահում, որտեղ Իրանի Իսլամական Հանրապետութեան հիմնը հնչելուց յետոյ, հիւրերին բարիգալստեան խօսք ուղղեց «Քանանեան» աղջկանց եւ «Կատարիեան» տղայոց ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների գրադարանավարուհի Կարին Տէր Մարտիրոսեանը եւ շնորհատրեց Իրանի Իսլամական լեղափոխութեան 35-րդ տարեդարձը: Իրանահայութեան եւ Նոր Զուղայի պատմական անցեալի վերաբերեալ հիւրերին առաւել ծանօթութիւն տալու նպատակով, նա բացատրութիւններ տուեց հայոց ազգային դպրոցների հիմնադրման, երկրի տարբեր ասպարէզներում իրանահայութեան ներդրած մեծ աւանդի, հայ աշակերտների բացառիկ յաջողութիւնների ու առնչակից այլ խնդիրների մասին: Այնուհետեւ ներկաները վայելեցին հայերէն եւ պարսկերէն երգերի կատարումներ՝ զոյգ դպրոցների աշակերտների միջոցով: Միջոցառման ընթացքում արտայայտեց Սպահան նահանգի Ուսումնադաստիարակչութեան գերատեսչութեան հետազօտական հարցերում օգնական պրն. Մոթամե-

դին, ով ողջունելով Դանիայից ժամանած ուսանողների ներկայութիւնը Իրանում, ի մասնաւորի հիմնաւորց Սպահան քաղաքում, յաջողութիւն մաղթեց նրանց:



Պատկերակութեան անդամները հիւրասիրելուց յետոյ, այցելեցին կրթահամալիրի տարրալուծարան, գրադարան, համակարգչի սենեակ եւ մի շարք այլ դասարաններ, որտեղ մօտկից ծանօթանալով հայոց ազգային դպրոցներում կիրառուող դասաւանդման մեթոդիկային եւ աշակերտական գիտահետազօտական աշխատանքներին, իրենց հիացմունքն ու գնահատանքի խօսքն արտայայտեցին հայոց դպրոցների գիտական մակարդակի, կազմակերպած աշխատանքների եւ տարրալուծարանային արդիական սարքերի կապակցութեամբ: Հիացմունքի արժանացաւ յատկապէս հայ աշակերտների անգլերէն լեզւի իմացութիւնը, ովքեր սահուն եւ անկաշկանդ գրուցում էին դանիացի ուսանողների հետ:



Ծրագրին ներկայ էին նաեւ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի ներկայացուցիչը, «Արմէն» տարրական երկսեռ դպրոցի, «Քանանեան» աղջկանց եւ «Կատարիեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների տեսչութիւնը եւ ուսուցչական կազմերի ու Ծնողական խորհուրդների ներկայացուցիչները:

«ԱՆԻԱՆԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԵՑԻՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ



Նախաձեռնությամբ հայոց ազգային «Քանա-Նեան» դպրոցի տեսչության, ուսուցչական կազմի և ԾՈՒՂԱԿԱՆ խորհրդի, Նոր Զուղայի հայոց ազգային կրթահամալիրի կենտրոնական դահլիճում կազմակերպել էր հետաքրքիր և գնահատանքի արժանի ցուցահանդես՝ «Անանի Նոր Զուղայեցիներ» խորագրով, որի պաշտօնական բացումը տեղի ունեցավ երկուշաբթի՝ փետրվարի 10-ի առաւօտեան ժամը 10:30-ին, ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի: Ցուցահանդեսին, որը նկրած էր Իրանի իսլամական յեղափոխության 35-րդ տարեդարձին, ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները և մի շարք հրապարակաբաններ:

*Վառ անհատականութիւններ».* այս գեղեցիկ խօսքերով հանդէս եկաւ աշակերտուհի Շադիկ Մատթէսեանը, որից յետոյ ցուցահանդեսի կազմակերպման և նախապատրաստական աշխատանքների կապակցությամբ արտայայտեց դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր Մարտիրոսեանը:



Սույն ցուցահանդեսում ներկայացւել էին մի խումբ ջուղայեցիների պատկերներ համապատասխան կենսագրականներով, ովքեր ծնւելով Նոր Զուղայում և գործունէութիւն ծաւալելով արևստի, քաղաքականության, մարզանքի և այլ ոլորտներում, անմոռանալի հետք են թողել պատմության էջերում:



Ցուցասրահի մի այլ բաժնում ցուցադրւել էին նաեւ աշակերտների կատարած լուսանկարները՝ այցելուներին առիթ տալով իրենց նախընտրած նկարի օգտին քվարկելու: Նշելի է, որ լուսագոյն լուսանկարները մասնակցել են Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի կողմից կազմակերպւած մրցույթին: Գեղեցիկ մտալիցում էր նաեւ աշակերտուհի Ռոժին Ներսիսեանի նկարչութիւնների ցուցադրումը, որոնք իրենց նորարճությամբ մեծ ուշադրութեան են արժանացել Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի կողմից և «Խառագմի» փառատօցի առաջին փուլը յաղթահարելով, անցել են յաջորդ փուլ:

*«Մեծերը մեր ճանապարհը լուսաւորում են, ուղի ցոյց տալիս: Մեծերը կամուրջ են, երկիրն ու երկիրքն իրար ծիածանող՝ սիրոյ, բարութեան, ազնւութեան, գեղեցկութեան կամար ոգեղէն, որի երփներանգ գոյները պիտի հրավառեն մեր սրտերի մէջ, լուսաւորեն ու ջերմացնեն մեզ... Ու այսօր այստեղ այդ մեծերից ներկայացւել են մի փոքր շնչաւոր ջուղայեցիներ, ովքեր սնւելով այս հողից, իրենց անխոնջ ու բեղմնաւոր աշխատանքով, կրթութեան, գիտութեան, արւեստին և սպորտին ծառայելու մեծ մղումով անմնացորդ նւիրւել են իրենց աշխատանքին, դառնալով*

Բացման հանդիսութեանը յաջորդեց անակնկալ մի

մրցոյթ, որին ականատես լինելու համար բոլորը հրաւիրւեցին կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահ: Սույն մրցոյթին, որը կազմակերպել էր ազգային ասանդոյթների պահպանման նպատակով, մասնակցել էին 15 ծնողներ, ովքեր իրենց պատրաստած ասանդական ճաշատեսակները յանձնեցին իրաւարար կազմի դատին: Ծաշատեսակների շարքում աչքի էին ընկնում բորանին, տոլման, հարիսան, մախոխը, փառինջով փլաւը, սմամուկը, սպասը եւ այլը:



Մեծ էր առաջացած խանդավառութիւնը, իսկ ներկաներին առաւել ոգեւորեցին Կարին Տէր Մարտիրոսեանն ու դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը: Մրցոյթի ընթացքում բացատրեց, որ սույն մրցոյթի կազմակերպումը Ուսումնադաստիարակչութեան հիմնարկի մտալոգսումն է, նպատակ ունենալով աշակերտներին հեռու պահելու դրսում պատրաստող ու-

տեստեղէնից:

Որպէս իրաւարար կազմի անդամներ՝ Սեդիկ Բալեանը, Վարդուշ Զարգարեանը, Զեփիոն Մարտիրոսեանը, Փարմիկէ Ուղուրեանը եւ Նոռա Նաւասարդեանը գնահատեցին իւրաքանչիւր ճաշատեսակ՝ ըստ մատակարարման ձեւի, ձեւաւորման ոճի, բոյրի եւ համի:

Մրցոյթն ընթացաւ ջերմ ու հաճելի մթնոլորտում, որտեղ մասնակիցները հանդէս եկան իրենց ճաշատեսակի բաղադրութիւնների եւ պատրաստման ձեւի մասին բացատրութիւններով, իսկ հանդիսատեսն իր հարցումներն ու տեսակէտները փոխանցեց մասնակիցներին:

Հարկ է նշել, որ սույն մրցոյթը հովանաւորել էին ծնողներ՝ Կարօ եւ Այիդա Յովսէփեանները:

Արդիւնքում լաւագոյններ ճանաչեցին Սրբուհի Թահմազեանի, Վանուհի Միրջանեանի եւ Փաքլին Պօղոսեանի պատրաստած ճաշատեսակները, եւ բոլոր մասնակիցները Սրբազան Հօր եւ ազգային մարմինների ներկայացուցիչների ձեռամբ ստացան գնահատագրեր:

Վերջում Թեմակալ Առաջնորդը գնահատելով ցուցահանդէսի եւ մրցոյթի կազմակերպումը, յայտնեց, որ սույն նախաձեռնութիւնը հետաքրքիր եւ նորարարութիւն էր եւ միաժամանակ ապացուցում է, որ հայ մայրն ինչ բնագաւառում էլ որ աշխատի, փորձում է իր զաւակներին սնել առողջ ուտեստեղէնով:



**ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՆԻՐԻԱԾ «ՏԱՐԵՑՆԵՐԻ» ՏԱՐԻԱՆ**

Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութեան կիրակի, փետրարի 16-ի երեկոյեան ժամը 4-ին, հալոց ազգային ծերանոցում, տեղի ունեցաւ Տեառնընդառաջի տօնակատարութիւն: Ծերանոցի տարեց բնակիչներից եւ Կանանց գթութեան միութեան անդամուհիներից բացի՝ միջոցաւմանը ներկայ էին Նոր Զուղայի հալոց ազգային մանկապարտէզի Դեղին խմբակի սաները, որոնց ընկերակցում էին դպրոցի տեսչութիւնը, ուսուցիչներն ու Ծնողական խորհուրդի անդամները:



Սկզբում տօնի առթիւ հոգեւոր արարողութիւն մատուցեց Տ. Խաչատուր քինյ. Զարգարեանի միջոցով եւ Համլետ սրկ.Մինասեանի

միջոցով, որից յետոյ ծերանոցի բակում բոցավառուեց ասանդական խարովրը:

Այնուհետեւ կրակի բոցերի պէս ջերմ մթնոլորտի ներքոյ մանկապարտէզի սաները ներկայացրին գեղարուեստական կատարումներ՝ մանկական գեղեցիկ երգերով ու արտասանութիւնով յագեցած, որից յետոյ միութեան վարչութեան նախագահ Արմիկէ Սիմոնեանը ողջունելով մանուկներին, շնորհակալութիւն յայտնեց մանկապարտէզի տեսչութիւնից, ովքեր ընդառաջելով հրաւերին, իրենց ներկայութեամբ առաւել ուրախութիւն էին պարգեւել ծերանոցի բնակիչներին:

Միջոցաւման շարունակութեան մէջ տեղի ունեցաւ հիրասիրութիւն, որից յետոյ Կանանց գթութեան միութեան կողմից սաներն ստացան նւէրներ: Մանկապարտէզի պատասխանատուների կողմից պատրաստած նւէրները եւս բաժանեցին տարեցների միջեւ՝ փոքրիկ հիւրերի ձեռքով:

Ս. ԱՍԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԻՏՎԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԻՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԻ ԵՐԻՐԻՒԾ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ «ԴՊՈՅ» ՀԻՄՆԱԿԻՐԱՄԻՆ



Հինգշաբթի՝ փետրվարի 20-ի երեկոյան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ տեղի ունեցաւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի բարեգործական համերգը, որի հասոյթն ամբողջովին տրամադրուելու է Բերիոյ հայոց թեմի (Սիրիա) «Դպրոց» հիմնադրամին: Ներկայ էին՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, քահանայից դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ դատի յանձնախմբի, հայոց դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչներն ու համայնքի անդամները:



Երեկոն մեկնարկեց Կոմիտասի «Ապարանը քարոտ ա» եւ «Անձրեւն եկա» երգերի կատարմամբ, որից յետոյ բացման եւ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ օրապէս հանդիսավար Կարին Տէր Մարտիրոսեանը, ով կարեւորութեամբ ընդգծեց սոյն համերգի իրականացման բարեգործական նպատակը:

Խումբը կատարեց Կոմիտասի «Ան-

ծինք նսիրեալք» եւ Ծոբերտի «Ave Maria» երգերը, իսկ Լալազէ Իսաղուլեանն ասմունքեց Վահան Տէրեանի «Աշնան Մեղեդի»-ն: Երգչախմբի անդամուհիների ելոյթներից յետոյ, նրանց միացան խմբի արական սեռի ներկայացուցիչները: Համերգի ընթացքում մենակատարումներով հանդէս եկան Մելանիա Դալթեանը, կատարելով Կաչինի «Ave Maria», Վանայ Ծիրանեանը՝ Գիսանէ Պալեանի «Յուսոյ աղօթք» երգերը, իսկ Թանիա Մինասեանը՝ Մարինէ Ալեւի «Պատրանքի թեով» դրախտային երգը՝ այն նւիրելով բոլոր մայրերին, որից յետոյ երգչախումբն իր խմբական կատարումները շարունակեց Բիթելզի «yesterday», Ժոզեֆ Կոսմայի (խօսք՝ Ջան Մերկեր) «Autumn leaves», Ֆելիքս Մենդելսոնի (խօսք՝ Charles Wesley) «Hark! The Herald angels sing» եւ Քենի Րոջերզի «When the saints go marching In» երգերով:

Նախքան վերջին կատարումը, հանդիսավարի միջոցով երեկոյի կազմակերպման ուղղութեամբ ցուցաբերած օժանդակութիւնների եւ համագործակցութիւնների համար հինչեցին շնորհակալական խօսքեր՝ ուղղած թեմակալ առաջնորդին, Թեմական խորհրդին, «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեանը, երգչախմբի անդամների ծնողներին եւ մի շարք անհատների, որից յետոյ խումբը գեղեցիկ ծաղկեպիւնջով իր երախտագիտութիւնը յայտնեց խմբավար Արմէն Ամիրխանեանին:

Այնուհետեւ ներկայացին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը: Նա բարձր գնահատելով սոյն բարեգործական ձեռնարկի կազմակերպումը՝ անդրադարձաւ սիրահայութեան ներկայ իրավիճակին եւ ասաց. *«Ձօրակցելու գործում մեր դրած իւրաքանչիւր կաթիլն իմաստաւորելու եւ արժեւորելու է: Հետեւաբար քանակը կարեւոր չէ, կարեւորը մասնակցութիւնն է մեծ բարեգործական ծրագրին: Տա՛յ Աստուած, որ սեւ մուլթ ամպերը հեռանան Սիրիայի երկնքից, պայծառ արեւն իջնի մեր ժողովրդի վրայ եւ նրանք վերստին գտնեն իրենց բնականոն կեանքը ու դէպի առաջ նայեն»:* Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին անդրադառնալով երգչախմբի հիմնադրման առաջին օրերին եւ խմբի արհեստավարժ ելոյթներին՝ երախտիքի խօսք ուղղեց խմբավար Արմէն Ամիրխանեանին՝ նման մասնագէտ երիտասարդներ դաստիարակելու համար:

Համերգը եզրափակեց Արթուր Գրիգորեանի «Տաս միլիոն հայ» երգի կատարմամբ, որն ինչպէս նախորդ կատարումները հինչեց անթերի եւ արհեստավարժ մակարդակի վրայ:

Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՊԱՏՃԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միության 19-րդ Պատգամաւորական ժողովը, մասնակցութեամբ՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ներկայացուցչի, թեմի Հաշիքնիչ մարմնի, միութեան արտոնատիրոջ, Կենտրոնական վարչութեան, միաւորների վարչութիւնների ներկայացուցիչների, միաւորների եւ Ծափինշահրի մասնաճիւղի՝ Ընդհանուր կամ Ներկայացուցչական ժողովներից ընտրուած պատգամաւորների ու հրապարակաւորների, գումարուեց 2014 թականի յունւարին:

Ժողովի բացումից յետոյ, միութեան Կենտրոնական վարչութիւնը ներկայացրեց 2012-2013 թականների երկամեայ գործունէութեան նիւթա-բարոյական զեկոյցը, որից յետոյ ժողովը քննարկեց օրակարգի իրաքանչիւր կէտր եւ կայացրեց համապատասխան որոշումներ՝ միութեան յառաջիկայ երկամեայ գործունէութեան շուրջ:

Վերջում տեղի ունեցաւ միութեան Կենտրոնական վարչութեան ընտրութիւնը եւ կատարեց պարտականութիւնների բաժանում, ըստ հետեւեալի. պրն. Մասիս Մինասեան՝ նախագահ, տկն. Ալլին Մելիքեան՝ փոխ-նախագահ, տկն. Միգանուշ Տէր-Մարտիրոսեան՝ քարտուղար, պրն. Զարեհ Յովսէփեան՝ գանձապահ, պրն. Նարբէ Թոշար՝ գոյքապահ, պրն. Էդարդ Ղազարեան՝ խորհրդատու, տկն. Լորեթա Դաւթեան՝ խորհրդատու:



**ՆՈՐ ԶՈՒՂՎՅՈՒ ԹՆԱԿԱՆՑ ԲՎՍԿԵՏԲՈՒ ԵՐԷՑՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ԼԻԳՎՅՈՒ ՄՐՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՅՎՋՈՂՈՒԹԻՒՆ ԿՐՁՎՆԱԿՐԵՑ**



Փետրւարի 9-ից 11-ը Սպահանում՝ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզաբանում, հիւրընկալութեամբ միութեան բասկետբոլի խմբի, կայացաւ Իրանի Կանանց բասկետբոլի Բ կարգի խմբի եզրափակիչ մրցաշարը, որի արդիւնքում երկրորդ տեղը գրաւեց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւնը:

Ծնորհատրելով միութեան բասկետբոլի խմբի անձնա-

կազմին՝ լիգայի Ա կարգի խմբում ներգրաւուելու կապակցութեամբ, մաղթում ենք առաւել յաջողութիւններ յառաջիկայ մրցութիւններում:

## «ՄԻՐ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ ԵՐԿՈՒ ԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՆԴԷՍ ԵԿԱԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Նախաձեռնությամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միության Մշակութային միատրի վարչության, եւ հովանավորությամբ միության Կենտրոնական վարչության, հինգշաբթի՝ յունարի 30-ի երեկոյեան, Հայաստանից ժամանած «Միհր» թատերախումբը «Կոմիտասի 10 պատիրաններ» եւ «Գոյներ» ներկայացումներով հանդէս եկաւ միության սրահում:

Մինչ ներկայացման սկսելը, Նայիրի Թահմազեանը հակիրճ տեսլներով տեղեկութիւններ փոխանցեց «Միհր» թատրոնի մասին եւ ներկայացրեց դերակատարներին:



Ներկայացումների հեղինակ եւ գեղարեստական ղեկավար՝ Յուլիա Մլքէ Գալստեանի եւ միւս մեծակատարներ՝ Շողակաթ Մլքէ Գալստեանի ու Պետրոս Ղազանչեանի միջոցով իրականացած «Կոմիտասի 10 պատիրաններ» բեմադրութիւնը իրայատուկ ոճով ու նոր մեկնաբանութեամբ անդրադառնում է Կոմիտաս վարդապետի կեանքի այն հատածին, երբ նա ձեռնադրում է որպէս հոգեւորական, հաւաքագրում ու ուսումնասիրում է հայկական ժողովրդական երգերաժշտութիւնն ու այն զտելով մաքուր ու որակեալ ձեւով մշակում եւ որպէս հայկական արեստ ներկայացնում է համաշխարհային բեմերում, ապա կենտրոնանում է Ապրիլեան եղեռնի օրերին նրա ստեղծագործութիւնների ոչնչացմանն ու որպէս ցեղասպանութեան ականատես նրա ապրած վշտին ու տառապանքներին, սակայն ներկայացումն ունենում է դրական ասարտ՝ ինչպէս Յուլիա Մլքէ Գալստեանը նշեց. «Սփռելով Կոմիտաս վարդապետի ձայնը, որը խորհրդանշում է, որ թէեւ Կոմիտասն այսօր չկայ, սակայն նա յաւերժ ապրելու է մեր սրտերում քանի դեռ կայ հայ ժողովուրդը»:

Ներկայացումը ժամանակակից պարի թատրոնի ոճի մէջ է, որտեղ ընդամենը հնչում է 10 բառ, ինչպէս՝ հայ, ձայն, երգ, հոգի, միտք..., որոնք ընտրւած են Կո-

միտասի 10 կէտերից կազմւած օրէնքից՝ կապւած արւեստի մասին, որոնց կարեւորութիւնը շեշտելու համար ժողովուրդն անւանել է պատիրաններ, իսկ բովանդակութիւնը փոխանցում է Կոմիտասի երգ-երաժշտութեան ու ճկուն շարժումների միջոցով:

«Գոյներ»-ը եւս ներկայացւեց հեղինակային ուղղւածութիւն ունեցող ոճում, որ ըստ թատրոնի գեղարւեստական ղեկավարի ներկայացման գաղափարը գործողութիւն-նկարչութիւնն է (action painting), որի հիմնադիրներից մէկը աշխարհում «Միհր»ն է: «Գոյներ» ներկայացումը շօշափում է սիրոյ, տառապանքի, սարսափի եւ ատելութեան թեմաներն ու չորս գոյների լեզուով բացայայտում է մարդկային անհատականութիւնը:

Այս ներկայացման մէջ ընդհանրապէս բացակայում է խօսքը, այն միաձուլումն է արւեստի, երգ-երաժշտութեան, նկարչութեան, լոյսի եւ պարի ու ճկուն շարժումների:



Ժամանակակից պարի ու պլաստիկ թատրոնի ոճում «Միհր»ի երկու ներկայացումներն էլ հետաքրքրութեամբ դիտւեցին հանդիսատեսի կողմից:

Նշելի է, որ ներկայացումից բացի, յունարի 28-ին տեղի ունեցաւ workshop՝ Մշակութային միատրի «Ծանթ» թատերախմբի, «Կոունկ» ասմունքի ու պարի համոյթի անձնակազմերի ու պատասխանատուների ներկայութեամբ, իսկ յունարի 29-ին՝ պարախմբի անդամ-ուհիների մասնակցութեամբ:

Յիշեցնենք, որ «Միհր» թատերախումբը Իրան էր ժամանել մասնակցելու յունարի 18-ից 31-ը Թեհրանում կայացած «Ֆաջր» միջազգային թատերական փառատօնին, եւ փառատօնի շրջագծում հանդէս է եկել իրանական «Եաս» խմբի հետ համատեղ «Զահաբ» պարսկական էպոսի ներկայացմամբ նաեւ հանդէս է եկել հեղինակային «Զինորներ» ներկայացմամբ:

Սա երկրորդ անգամն է, որ «Միհր»ը մասնակցում է «Ֆաջր» փառատօնին:



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆԷՒԻԲԱԽ TALK SHOW ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒԲՍ

Հայոց ցեղասպանության 100-ամեակին նվիրած ծրագրերի շրջագրծում, ուրբաթ՝ փետրվարի 7-ի երեկոյան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւնում, համատեղ նախաձեռնությամբ «Ռուբէն» երիտասարդական միութեան եւ «Արարատ» միութեան Ուսանողական միաւորի, տեղի ունեցաւ talk show՝ «Հայ երիտասարդը եւ ազգային զարգացում» թեմայով:

Talk show-ի ծրագիրը վարեցին Լեոնիկ Ղազարեանը, Լալագէ Իսաղուլեանը եւ Ռուբէն Խոսրովեանը:

Ծրագրի ընթացքում քննարկեցին Հայաստանի Հանրապետությանն առնչող մի շարք խնդիրներ, որոնց շարանում էին՝ պետության գոյատեւման հիմնահարցը, երկրի բնակչության թիւ նազումը, տնտեսական իրավիճակը եւ տեխնոլոգիայի զարգացումը: Այս բոլոր թեմաները ներկայացւեցին պաստառի վրայ ցուցադրող պատկերներով եւ օտար երկրների կացութեան հետ համեմատութեան դնելով:

Իւրաքանչիւր թեմային յաջորդում էին սրահում ներկայ երիտասարդների անձնական տեսակէտներն ու մեկնաբանու-

թիւնները եւ առկայ խնդիրների վերացման ուղղութեամբ նրանց առաջարկները, ովքեր հասատեցին, թէ պետութեան գոյատեւման եւ ծրագրերի իրականացման համար՝ անհրաժեշտ է կայուն տնտեսական իրավիճակ, զինուժ եւ հզօր կամք: Իսկ բնակչութեան թիւ աճի կապակցությամբ բոլորը հասան այն եզրակացութեան, որ պէտք է պետական մակարդակով յատուկ աջակցութիւն ցուցաբերի բազմազան ընտանիքներին եւ հարկ եղածը նախաձեռնի նման ընտանիքների ստեղծման ուղղութեամբ, չմոռանալով նաեւ արտագաղթի թափը կտրելու համար երկրի քաղաքական եւ տնտեսական իրավիճակում բարեփոխումների կիրառումը:



Առաջարկներ հնչեցին նաեւ երկրի տնտեսական զարգացման ուղղութեամբ, իսկ վերջում քննարկեց հայապահպանման հիմնահարցը:



**Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԸ ՆՇԻՇՅ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ**

Նախաձեռնությամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Երէջների միաւորի վարչութեան, եւ անդամ-անդամուհիների համագործակցութեամբ, ուրբաթ՝ 2014 թականի փետրվարի 14-ին, միութեան բիւֆէում նշւեց ս. Սարգիս զօրավարի տօնը:

Միջոցառմանը հրաւիրւած էին միութեան Կենտրոնական վարչութիւնը, միաւորների վարչութիւնների ու բաժանմունքների անդամ-ուհիները եւ Երէջների միաւորի անձնակազմը: Թէեւ հանդիսութիւնը ներքին բնոյթ էր կրում, սակայն հրաւիրեցին նաեւ միութիւն մուտք գործողները: Տեղի ունեցաւ ընդունելութիւն, սպա ներկաներին բաժանեց աղի բլիթ, իսկ օրւայ խորհրդանիշ՝ կարմրագոյն թխածքներով զարդարած ծառը, պատերին փակցրած սիրոյ տօնին նվիրած պատգամները եւ Երէջների միաւորի անդամուհի Հոիսիսկ Սիմոնեանի միջոցով հնչող խօսքերը յուշում էին սիրոյ հզօրութեան մասին եւ որ՝ մենք՝ հայերս ունենք Վալենթայնին համազօր տօն, որը Ս. Սարգիս զօրավարի տօնն է:



### ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ՆԻՒՐԻԱԾ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՕՆԱԿԱՆ ՄԵԾ ՏՕՆԻՆ

Հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի եւ նախաձեռնութեամբ Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի վարչութեան, փետրարի 27-ի երեկոյեան, «Ալեմուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ:



Որպէս երեկոյի բացում, Մշակութային միաւորի վարչութեան անունից ելոյթ ունեցաւ Թալին Մովսիսեանը, ապա ներկաներն ունկնդրեցին Ծահինշահի

հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանի կատարմամբ «Նորահրաշ» շարականը: Այնուհետեւ օրւայ բանախօսներ՝ հայր Անանիա վրդ. Գունճանեանը եւ վաստակաւոր ուսուցիչ Վարուժ Մովսիսեանը, հերթաբար մեկնաբանեցին կրօնական եւ պատմա-քաղաքական դիտանկիւնից դիտուած Վարդանանց հերոսամարտը:



Ցուցադրեց Վարդանանց պատերազմը ներկայացնող տեսաժապաւէն, որից յետոյ Կարէն Խանլարեանը ելոյթ ունեցաւ «Լոեց» երգի կատարմամբ:



#### Շարունակութիւն 19-րդ էջից

#### ՏԵԱՌՆԸ ՆԻՒՌԻԱԶՐԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԸ...

